

ՀԵՄԷ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՅՆՎ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

---


Ա. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

Պ Ռ Ո Շ Յ Ա Ն Ը

Յ Ե Վ

Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ա Կ Ա Ն

Բ Ա Ն Ա Հ Յ ՈՒ Ս ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը



Ա. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ



# ՊՌՈՇՅԱՆԸ

Յ Ե Վ

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ


## ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ



Պատ. խմբագիր՝ Ս. Կարապետյան  
Տեխ. խմբ. և սրբագրիչ՝ Հ. Մալիլյան  
Կոնսրտլ սրբագրիչ՝ Ռ. Տոնյան

Գլավիկտ № 6548. Պատվեր № 237. Տպած 3000.

«Թորհրդային Հայաստան»-ի Հրատ. տպարան





## ԱՌԱՋԱԲԱՆ


Հայ գրականութեան անցյալի պատմագիրներն ու քննադատները խոսելով Պոսշյանի մասին՝ համարյա բոլորն ել նշել են նրա գրվածքներում տեղ դրած Ֆոլկլորային նյութերի փաստը, առանց, սակայն, տալու գրա քիչ թե շատ մանրամասն ուսումնասիրութիւնը: Այդ խնդրում դժբախտաբար հեռու չեն գնացել նաև ժամանակակից խորհրդային գրականագետները:

Ներկա աշխատութիւնը; վոր բաղկացած է յերկու առանձին մասերից, նպատակ ունի ա) տալու Պոսշյանի ոգտագործած Ֆոլկլորային նյութերի վերլուծումը (ներածութիւն) և բ) ի մի հավաքելու մեր հեղինակի գրվածքներում ցրված՝ հին Աշտարակի ժողովրդական ստեղծագործութեան նմուշները (բնագիր):

Ա. Ղ.



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ



---

Պոռշյանը 19-րդ դարի հայ այն ականավոր, իսկական ժողովրդական գրողներից է, վորոնք մոտիկից կապված լինելով աշխատավորական խավերին, բարձր են գնահատել նրանց ստեղծագործությունը:

Իր առաջին իսկ գրական գործի («Սոս և Վարդիթեր» վեպի) առաջաբանում խոսելով Մովսես Սորենացու Հայոց Պատմության մեջ պահպանված ժողովրդական բանահյուսության հնագույն պատմականների մասին, մեր անվանի վիպասանը բացահայտում է իր գրական վերաբերմունքը «հասարակ ժողովրդյան» պարզ և անպաճույճ ստեղծագործությունների հանդեպ, վորոնցով «հեռատես ծերունին պարզ հայելվո մեջ» ցույց է տալիս «իրա նախնյաց հոգվո պատկերը»: Նման համոզմունք ունենալով ժողովրդական ստեղծագործության մասին, Պոռշյանն իր անդրանիկ և հետադա բոլոր գրվածքներում, ավելի կամ պակաս չափով, ոգտադործում է հայրենի գավառի (Արարատյան նահանգ) Ֆոլկլորի մի շարք նմուշներ: Այդ բանում նրան մեծապես ոգնում են այն լայն ծանոթությունները, վոր նա ուներ ժողովրդի կենցաղի, նիստ ու կացի, հավատալիքների և, մասնավորապես, բանահյուսության բնագավառում: Ծնվելով և մեծանալով գյուղական ընտանիքում (աղքատ գերձակի տանը), այնուհետև իր կյանքի մի դպալի մասն անցկացնելով միևնույն միջավայրում—իբրև գյուղական ուսուցիչ, գրագիր, թեմական տեսուչ և

այլն — Պոռշյանը վաղ հասակից ամենորյա շփման մեջ  
և յեղել ժողովրդական լայն խավերի հետ: Գյուղի  
ձերերից և պառավ նաներից նա ուսել և վեր-  
ջիններիս «վաղի առածները», ձմռան յերկար դի-  
շերներին, գյուղական ողաներում՝ ունկնդրել նրանց  
պատմած հրաշապատում հեքիաթները, հնորյա գրույց-  
ներն ու սրամիտ առակները: Գեղջուկ յերիտասարդ-  
ներից ու աղջիկներից Պոռշյանը լսել ու սովորել և  
նրանց աշխատանքի ու սիրո ուրախության և թախ-  
ժի մրմունջները՝ «հոսովելները», «հարրբանները»,  
«ջանգյուլումները», գյուղացի մանուկներից՝ նրանց  
սիրած ու սերտած անթիվ խաղիկները...

Պոռշյանին ժողովրդական ստեղծագործության  
գանձերի հետ առաջին ծանոթացնողներից յեղել և հենց  
նրա հայրը, աշտարակցի դերձակ Ստեփանը: Իր վե-  
պերից մեկում, խոսելով Այդր-գյուլի վերաբերյալ տեղա-  
ցիների մեջ շրջող առասպելների մասին, Պոռշյանը  
գրում և. «Այդր-գյուլի վրա հնարած առասպելներն ավե-  
լի շատ են: Մինչև ցայսօր ել յես անտարբերությամբ  
չեմ կարողանում հիշել Այդր-գյուլի անսււնը, վոր անձս  
չքսամնի: Յերբեք չեմ կարող մոռանալ, ինչպես իմ  
հանգուցյալ հայրը վսեմ և ազդու բառերով պատմեց  
ինձ Այդր-գյուլի բոլոր պատմությունները, յերբ վոր  
ձիու վրա ինձ յուր թարքն առած՝ գնում էյինք Սե-  
ջրի գլուխը մովրովից ինձ համար արձակման վկայա-  
կան ստանալու, վորով գնամ՝ ուսումս առնեմ»<sup>1</sup>: Մի  
այլ տեղ անդրադառնալով իր գրվածքներում տեղ  
գտած ազգադրական և ֆոլկլորային հարուստ նյութե-  
րի աղբյուրների խնդրին, Պոռշյանը գրում և, վոր

1 Պ Պոռշյան, Հայի խնդիր, Բաղու. 1904 թ., էջ 28—29:

Իրեն համար իբրև այդպիսիք յեղել են՝ զի մանկու-  
 թենե մինչև վերջին տարիներս Աշտարակի՝ իմ ծնըն-  
 դյան տեղի՝ ծերունիներից լսածներս<sup>1</sup>: Մի յերրորդ  
 տեղում խոսելով Ապարանի, Կողբի և Թալինի կողմե-  
 րի դյուղերի այն ժամանակվա կառավարիչ (գործա-  
 կալ) Հ. Քյանդարյանի մասին, վորի մոտ ինքը  
 բավական յերկար ժամանակ վարել և քարտուղարի  
 պաշտոն, Պոռչյանը խոստովանում և, վոր այդ պաշտո-  
 նը իրեն համար չի յեղել միայն նյութական վարձա-  
 տրության աղբյուր, այլ, դրա հետ մեկտեղ, միջոց և  
 տվել նրան նաև ճմտիկից ծանոթանալու Արարա-  
 տյան և Արադածոտն դավառների բնակիչների կյանքին  
 ու բնավորություններին<sup>2</sup>: Վերջինների տակ մեր  
 հեղինակն, անշուշտ, հասկացել և ինչպես ժողովրդի  
 նիստ ու կացը, հավատալիքներն ու սովորություն-  
 ները, այնպես և, դրանցից անբաժան, նրա բանավոր  
 ստեղծագործությունը: Պակսոս նյութ չի մատակարար-  
 ել Պոռչյանին նաև նրա հետագա տարիների աստան-  
 դական կյանքը: Ասլրուստի միջոց հայթայթելու նպա-  
 տակով դանազան պաշտոններով ու գրադմունքներով  
 (ուսուցիչ, լուսանկարիչ, անխստավաճառ...) շրջելով գա-  
 վառից գավառ և քաղաքից քաղաք (Ապարան, Շիրակ,  
 Նախիջևան, Որդուբաթ, Ագուլիս, Յերևան, Թիֆլիս,  
 Բաղու, Հաշտարխան) և մոտիկից շփվելով ժողովրդի  
 տարբեր խավերի և հարևան ազգությունների հետ,  
 Պոռչյանն ևլ ավելի հարստացրիլ և իր բանահյուսա-  
 կան պաշարը:

1 Պ. Պոռչյանց Գավաժաղիկ, Տիֆլիս, 1878 թ., էջ 2.  
 (Առաջաբան): Հմմտ. նույն տեղ, էջ 333:

2 Պ. Պոռչյանց, Հուշիկներ, Ա. գիրք. Թիֆլիս, 1894 թ.,  
 էջ 209—210:

Դառնալով գրող, Պոռշյանն իր գրվածքներում  
լայնորեն ոգտագործում և տարիների ընթացքում իր  
ամբարած վերոհիշյալ նյութերը, ունենալով յերկու  
հիմնական նպատակ.

1. «Պարզ հայելվո մեջ ցույց տալ հասարակ ժողո-  
վրդյան հոգվո պատկերը», և

2. Ազատել «ժամանակի անհետացնող ժանիքնե-  
րից» Հայաստանի գլխավոր նահանգի (Արարատյան)  
«տեղական կյանքի պատկերը յուր բարբառի, առած-  
ների, ավանդությունների և ծեսերի հետ»<sup>1</sup>:

\*  
\* \*

Պոռշյանի «Սոս և Վարդիթեր», «Կովածաղիկ», «Հացի  
խնդիր», «Ցեցեր», «Հունո», «Բղղե», «Շահեն» վերնա-  
գրերով մեծ վեպերում և «Մեր Խեչոն», «Աքցիզչին»,  
«Միքել աղենց Արդուլը» և այլ մանր պատմվածքներում  
ու գրույցներում տեղ գտած ֆոլկլորային նյութերն ի-  
րենց ժանրային առանձնահատկությունների համեմատ  
կարելի չե բաժանել չորս հիմնական խմբերի.

1. Ժողովրդական առածներ, 2. ժողովրդական  
յերգեր, 3. աշուղական յերգեր և 4. ժողովրդական  
ավանդություններ: Հիշյալ խմբերից յուրաքանչյուրն  
իր հերթին տրոհվում և մի քանի յենթատեսակների:  
Այսպես, առածների ընդհանուր խմբի մեջ մտնում են  
նաև ժողովրդական վոճերն ու ասացվածքները: Յեր-  
գերի խմբի մեջ սիրո, ծիսական և այլ յերգերի յեն-  
թատեսակները: Աշուղական յերգերի մեջ՝ աշուղական  
խողերի մի յերկու տեսակներ (մուխամբազ, բայաթի):  
Ժողովրդական ավանդությունների մեջ՝ զանազան ա-

1 Պ. Պոռշյանց, Հացի խնդիր. Թիֆլիս, 1880 թ., էջ 5:

աասպելներ, գրույցներ, առականման պատմություններ և այլն:

Բանահյուսական վերոհիշյալ շորս մեծ խմբերից ամենից ավելի աչքի յե ընկնում առաջինը— ժողովրդական առածների բաժինը: Միայն «Սոս և Վարդիթեր»-ի մեջ դրանց թիվը հասնում է շուրջ 150-ի, «Կովածաղիկ»-ի մեջ՝ 100-ի, «Հայի խնդիր»-ի մեջ՝ 150-ի, «Ցեցեր»-ի մեջ՝ 50-ի, «Բղդե»-ի մեջ՝ 50-ի, «Հունո»-ի մեջ՝ 40-ի, «Շահեն»-ի մեջ՝ 30-ի, մանր պատմվածքների ու գրույցների մեջ՝ մոտ 40-ի. ընդամենը՝ մոտ 600-ի:

Ժողովրդական բառ ու բանի այդ հակիրճ, բայց խիստ բովանդակալից ու դիպուկ նմուշների միջոցով Պոռչյանը մերկացրել ու խարդահանել է աշխատավոր ժողովրդի արյունը ծծող բազմաթիվ ու բազմատեսակ գյուղական ցեցերին: Վերջիններիս մեջ նա նախ և առաջ նկատել ու մտրակել է առևտրական կապիտալի գյուղական գործակալներին — Զհուդ Աղաջանի, Բղդեյի և մյուսների նման մակարույծ չարչիներին: Պատմելով այն մասին, վոր նահապետական կարգերի փոփոխման հետևանքով այժմ գյուղում կառավարում են «հարուստ և խարդախ անչափահաս շողոքորթները», Պոռչյանը գյուղի սպիտակամորուս ծերունիների բերանով ասում է. «Վա՛յ Նեգ Բաղաբ, բազավորդ մանուկ ա դառել» (ՀԽ. 110), և այնուհետև մի շարք ցայտուն առածներով բնութագրում վերոհիշյալ «հարուստ ու խարդախ շողոքորթների» վարքագիծը— կաշառակերություն ու կաշառատություն, թալան և այլն: «Դասարկ փայտին շուն չի հաչալ» (Բ. 230), ասում է, որինակ, նրա «Բղդե» վերնադրով վեպի համանուն

հերոսը (չարչի), առաջարկելով գավառապետին ընդունելու իր տված կաշառքը: «Յերկու դոչի գլուխ մի պրդրնձում չեն յեփիլ» (Բ. 188), մտորում է նույնը իր և իրեն մրցորդ խանութպան Զհուդ Աղաջանի միատեղ գոյության անհամատեղելիության մասին, գտնելով, վոր իրենցից մեկն ու մեկը տեղը պետք է զիջի մյուսին, քանի վոր՝ «Աօխարհիք մի սանդուխտ է՝ մինք վեր է յելնում, մինք ցած իջնում» (Բ. 202):

Գյուղական ցեցերի վերոհիշյալ խմբի մեջ, աշխատավորությանը կեղեքելու, կեղծիքի ու թալանի իր ընդունակություններով բացառիկ տեղ է գրավում «Հացի խնդիր» վեպի հերոս, հուշակավոր Միկիտան Սաքոն: Պատմելով նրա գոփոզունակության, բացառիկ ճարպկության և նյութած անթիվ մեքենայությունների մասին, Պոռչյանը հայտարարում է. «Թքու յե, բան չի, ամեն մարդի բան չի» (ՀԽ. 42), և մի առ մի մերկացնում իր հերոսի բոլոր հոսի կողմերը: «Առ ու տուրք ախպիր են, բնչակ տա վոչ, առնել ել չես» (ՀԽ. 47): «Ով չուես, նա կուես» (ՀԽ. 573, 574): «Բո բան աջ ա, ով կուզի բող հաչա» (ՀԽ. 65): «Ով ետր կլնի, յես փայանն եմ» (ՀԽ. 482), ասում է Սաքոն զանազան առիթներով, գործածելով կաշառակերության ու կաշառատվության կենսական անհրաժեշտության, հասարակական կարծիքն արհամարհելու, պայմաններին հարմարվելու այն իրեն համար նշանաբան դարձրած վերոհիշյալ և բաղմաթիվ այլ ժողովրդական առածներ ու ասացվածքներ:

Ցեցերի յերկրորդ խումբը, վորի ներկայացուցիչներին առածահար և արել Պոռչյանն իր վեպերում, դա՛ պուղի ունկորությունն է — քեթխուդաները, աղաներն ու տանուաերները: Վերջիններիս մեջ ամե-

նից ավելի աչքի յե ընկնում «Ցեցեր»-ի հերոս Բալասան աղան: «Ասում են, վոր դրան և հանձնված յեղել պատերազմից վնասվածներին մտտակարարելիք նը պատռը. ամենքին լի ու լի բաշխելոց հետո՝ իր գլուխն, եյ չի մոռացել. «Մեղը ծախողը մասը կլպսի» (Ց. 58). պատմում և Պոռչյանը նրա շորքուհեյության» առաջին շրջանի մասին, և այնուհետև ձայն տալիս հենց իրեն: «Քանի՞ կոպեկի կառնեմ հասարակաց դատաստանը, իմ բանն աջ է, թող ով կուզե հաչե» (Ց. 200), ասում և Բալասան աղան, յերբ նրան հիշեցնում են հասարակաց կարծիքի մասին: «Կկակդի, կուսի», «Յեկել և մեր մեհեն, կսովորի մեր փեհեն» (Ց. 218), ասում և նույնը՝ գլուխը հոպոպներով (նոր հովերով) լցրած իր կրտսեր յեղոր մասին և այլն:

Ցեցերի յերբորդ խմբի մեջ են մտնում պետական պաշտոնյաները — մովրով, նահանգապետ, դավառապետ, դիվանատան ծառայողներ, դատավոր, գրագիր, յասավուլ, քյոխվա ու գզիր: Իրանց անպատիժ արարքներն են՝ ծեծ, բանտարկություն, սպանություն, մթերքների գրավում և այլն: Ահա և նրանք՝ առաջների լույսի տակ: «Յեզր վեր ա ֆառում, օսկիցը հորք ուզում» (Սվ. 190), «Սանդն էլ ա իր ձեռին՝ պոպոֆն էլ» (ՀՊ. 45), ասում են Պոռչյանի վեպերի աշխատավոր գյուղացիները իրենց արյունը ծծող մովրովի մասին: Նույն կերպ նրանք բնութագրում են նաև տանուտիրոջն ու գյուղական դատավորին: «Տանուտիրոջ վրա լիս վեր եկավ, ո՞վ տեսավ — գզիրը» (ԽՀ. 236), «Կնուեր գլորվեց, խուփը գտավ» (Ց. 186), ասում և «Ցեցեր»-ի հերոսներից Մելիք Բադալը՝ Ո. գյուղի նորընտիր տանուտիրոջ և գյուղական թալանչի դատավորների մասին: «Դասարկ փեհին տուն չի հա-

չալ» (ՀԽ. 262), մեր ըրթին ով մտիկ կտա, թե վոր տըկ-  
լոր գնանք ենտեղ ցցվինք», հորդորում ե տանուտերը  
Խեչանին, նոր դատավորին կաշառք — ընծաներով դի-  
մավորելու անհրաժեշտության մասին ե այլն:

Աշխատավոր գյուղացիութանը զօնելու գոր-  
ծում, մովրովից, տանուտերից ու դատավորից հետ  
չեն մնում նաև գյուղական ստորին պաշտոնյաները՝  
«Գողն ի՞նչ կուզի՝ մուր գիծեր» (ՀԽ. 272), ասում ե  
Պոռչյանը նրանց մասին, վորոնք սգովելով ուս-  
թուրքական պատերազմի շնորհիվ տիրող խառնակ դը-  
րությունից, ել ավելի յեն թալանում աշխատավոր ժո-  
ղովրդին:

Պետական սատիճանավորներին զուգընթաց,  
Պոռչյանն իր վեպերում, առածների ու ասացվածքնե-  
րի ոգնությամբ քննադատում ե նաև հոգևոր պաշ-  
տոնյաներին — յեպիսկոպոս, վարդապետ, տերտեր, տի-  
րացու, վորոնք հանդես են գալիս գյուղի մյուս ցե-  
ցերի ու ցարական շինովնիկության հետ սերտորեն  
համադորձակցած: «Առաջնորդը յես եմ, բակլեն խառած  
եմ ցանում» (ՀԽ. 27), ասում ե գյուղի քահանան գոր-  
ծակալ հայրսուրբի մասին, ակնարկելով նրա կամա-  
յականությունները՝ «հասը՝ սչհաս» հայտարարելու  
ե այլնի առթիվ: «Գողը վոր տանու ըլի, յեզն յերթիկովը  
քուս կեաթի» (Կ. 74), ասում ե գյուղացիներից մե-  
կը իրենց գյուղի շքովակ՝ տեր Մելիքսեթի մասին,  
նկատելով թալանչի սարվաղների հետ նրա ունեցած  
դաշնակցությունը: «Թուղթը ծուռ ծուռ, արասին կուլ  
տուր», մի տուն շարական, մի կարճ ավետարան  
կարդում են ու փողը ձնկացնում, (ՍՎ. 66), ասում ե

Պոռշյանը, խոսելով գյուղական քահանաների պարտա-  
կանությունների մասին և այլն:

Այսպես տեղին և ժամանակին ոգտագործելով ժո-  
ղովրդական հակիրճ ու պատկերավոր առածները,  
Պոռշյանը տալիս է գյուղական վերոհիշյալ աշխարհիկ  
ու հոգևոր ցեղերի ու ցարական չինովնիկության շա-  
հագործման ու թալանի առարկա, նրանց ճիրաննե-  
րում թփրտացող աշխատավոր ընչազուրկ գյուղացիու-  
թյան վողջ ծանր ու անմխիթար դրությունը: «Վոր  
մի բեր բաժես, ինն հարյուր կարկասան վեր կրնկնի (ՀՊ.  
21), «Թուղիրն ամես՝ շորահոս չի վեր ըլիլ» (ՀՊ.  
24), «Քաղցած հաճին են ֆնում» (ՀՊ. 273) և այլն:  
Իբրև բնական հետևանք այդ ծանր վիճակի, գյուղա-  
ցիության մեջ առաջ են դալիս և ձևավորվում դասա-  
կարգային ինքնադիտակցությունը և միասնական  
պայքարի անհրաժեշտության գաղափարը: Ահա դրա  
մի շարք արտահայտությունները, վոր այնքան ցայ-  
տուն ու պատկերավոր կերպով դրսևվորված են նույն  
ժողովրդական առածների ու ասացվածքների միջոցով:  
«Աղվեսը մարագումը ձագ ա հանել՝ մեր քագու հզորյու-  
նից՝ ա», «Մար գահգաս գնաց աստու մոտ կացնի ձեռի-  
ցը, վոր իրան կտում ա, ասեց՝ կորբ ֆեզանից ա» (Ց.  
155). «Մենք վոր մի խոսքի ըլնենք, իրար տակ չփորենք,  
իրարից չուղուլու թյուն (լրտեսություն) չանենք,  
Ջաղացողանենց Բալոն մեղ ինչ կարա անել», ասում  
են «Ցեցեր» վնպի աշխատավոր գյուղացիները մեկ մե-  
կու: «Գեղ գանգնի, գերան կկոտրի» (Ց. 89), ասում է  
նրանցից մեկը, ի պատասխան յուրայինների տըր-  
տունջի, ուղղված իրենց հարստահարող ցեղերի դեմ, և  
այլն:

Կապիտալիզմի դեպի գյուղ կատարած ներարշա-  
 վի հետևանքով ստեղծված հասարակական-տնտեսա-  
 կան նոր հարաբերություններին Պոռճյանը հակադը-  
 րում է մի քանի տասնամյակ առաջ գյուղում գոյու-  
 թյուն ունեցող նահապետական կարգերը: «Սրանից  
 քսան, կամ քսան ու հինգ տարի հառաջ,— գրում է նա,—  
 իմ լավ միտքս է, մեր գյուղերումը յերկու դրացի մի  
 տան պես հյին ապրում. մի առած ունեյին, վոր պատ-  
 դամի նման ընդունված էր ամենքիցը. «Փոխք ոխսք  
 Տուն ապահել» (ՀԽ. 205): Այս առածի սուրբ նշանա-  
 կությունը ամենքին լավ հայտնի յեր, պատեպատ հա-  
 րեվաններն յեղբոր նման միմյանց կարիքին հասնում  
 էին: Իսկ աշխատավոր գյուղացիության արյունը ծծող  
 վամպիրներին Պոռճյանը հակադրում է «հալալ աշխա-  
 տանքով ապրող», «սիրտը լեն սայաթին», վորի սի-  
 բած ու գործածական տոածներն են՝ «Ռահաթի սիրսք  
 լեն կրլնի» (ՀԽ. 266), «Ով ածխաթի, նա կուսի» (ՄՎ. 7),  
 «Աղ ու հաց, սիրսք բաց» (Հն. 32), «Մոսիկ հարեվանք լավ  
 է հեռու բարեկամիցը» (ՀԽ. 129), «Մարդամիջի մարդս  
 րլի, հազար բուման պարսֆս րլի» (ՀԽ. 187), «Անաս-  
 ված սեղր կաց, անարխա (անողնական) սեղր մի կենալ»  
 (Հն. 19)., և այլն, և այլն:

Առածների ու ասացվածքների միջոցով Պոռճյանը  
 տալիս է նաև յերբեմնի նահապետական հայ գյուղացու  
 հայացքներն ու դատողությունները՝ իր աշխատան-  
 քային առորյայի («Եզուցվա բանին ձյուն է յեկել» (Բ.  
 98), «Դյահկիր (համառ) ձին քարվան չի կսրիլ» (Ց. 306),  
 «Մի Տան ճերեփ վոր յերկու Տանդկան ձեռին րլնի՝ Տուս

բաժանի կրկնի» (ՍՎ. 4), կենցաղի ու սովորու թափան  
 նորմաների՝ («Աղջիկը վոր կա՛ շուքա յե, վոր կոսր-  
 վեց, չի կարկասվի») (Հն. 165), «Աղջիկը վոր կա՛ անկտեղ  
 ձմերուկ ե» (Հն. 157), «Քեհնին նեանածի բերանն ա»  
 (Հն. 202), «Սուլիբեն ֆցած՝ բանն անիժած» (Հն. 86),  
 աշխարհայացքի ու հողերանության՝ («Օականի գրվածը  
 չի ջնջվի») (Հն. 602), (Կ. 478), «Արյունն արեով չեն լը-  
 վանալ» (Բ. 337), հավատալիքների ու հասկացողու-  
 թյունների՝ («Վաս համբավը շուք տեղ կհասնի») (Հն.  
 406), «Փորձանի կես համբից դառնալը խելոփոխուն  
 ա» (Հն. 426), «Հարսանիքն ու մահենիքն ախպեր են»  
 (Հն., 591), «Շիտակ խոսքը հանափով կառեն» (Բ. 96),  
 «Հասկացող վորդին հոր աջու աչքն ե» (Հն. 290) և այլ-  
 նի մասին:

Սակայն, ժողովրդական առածներն ու ասացվածք-  
 ները միայն իրենց բովանդակությամբ չեն, վոր գրա-  
 վել են Պոռչյանի ուշադրությունը: Իրանց միջոցով  
 նա հաջողությամբ լուծել է մի այլ կարևոր խնդիր  
 ևս: Իր վեպերի առանձին գլուխների ու հատվածնե-  
 րի մի դդալի մասը նա վերնադրել է առածներով ու  
 ասացվածքներով, վորոնց մեջ խտացած ձևով արտա-  
 հայտել է տվյալ գլխի կամ հատվածի հիմնական գա-  
 ղափարը: Հիշյալ վերնադրերը հաճախ ավելի հաջող  
 են, քան իրեն՝ Պոռչյանինը: Առաջինները վոչ միայն  
 ավելի սեղմ են ու հազիրձ, այլև ավելի պատկերավոր են  
 ու հնչյուն, և դա շնորհիվ բանաստեղծական խոսքի  
 այն առավելությունների (ռիթմ, հանգեր, գեղարվես-  
 տական համեմատություններ . . . ), վոր ունի ժողո-  
 վրդական բառ ու բանն ընդհանրապես և առածներն

Պոռչյանը և բան



ու ասացվածքները՝ մասնավորաբար: Մեր ասածը հաստատելու համար բերենք մի քանի որինակներ:

Պոռոջանի ինֆնուուլյն վերնագրերից, 1. «Յորենի շարունակությունը կամ Մաշաղի Ռամազանը» (ՀԽ. 329), 2. «Ստվերը կամ անկոչ հյուր» (ՀԽ. 449), 3. «Քննիչը բանտի խորքերումը» (ՀԽ. 568), 4. «Սոսակցության աղը» (Յ. 23), 5. «Տղամարդի հոգին» (Յ. 38) 6. «Ուխտ կամ Վարդ Մանուշակ» (Կ. 26), 7. «Տիկին և աղախին կամ մայր ու աղջիկ» (Կ. 89), և այլն:

Ժողովրդական առածներից ու ասացվածքներից վերցված վերնագրեր.— 1. «Պատիկ ա ու ճատիկ ա» (ՀԽ. 306), 2. «Գող՝ սիրտը դող» (ՀԽ. 157), 3. «Հարսանիքն և մահենիքն ախպեր են» (ՀԽ. 591), 4. «Ես ամպը կարկրտի ամպ ա» (Կ. 170), 5. «Հացը հացարարին տուր, մինն ելավելի» (Կ. 205), 6. «Կաշառքը մութ տեղը լույս կտա» (Կ. 543), և այլն:

Բացի վերոհիշյալից, առածներն ու ասացվածքները, ժողովրդից վերցված պատկերավոր արտահայտությունների, նմանությունների ու համեմատությունների, վոճերի, մակդիրների ու ածականների հետ միասին, հարստացրել ու ճոխացրել են Պոռոջանի լեզուն, համ ու հոտ հազորդել նրա վոճին:

\*  
\* \*

Առածներից ու ասացվածքներից հետո, իրենց քանակով Պոռոջանի ոգտադորձած Քոլկլորային նյութերի մեջ յերկրորդ տեղը բռնում են ժողովրդական յերգերը: Այստեղ առաջին հերթին աչքի յեն ընկնում ծիսական յերգերն իրենց մի քանի յենթատեսակներով: Իր «Սոս և Վարդիթեր» վեպում, որինակ, նկարա-

զրելով ծաղկազարդի տոնակատարութիւնը գլուղում,  
մեր հեղինակը մեջ ե բերում գեղջուկ մանուկների  
ճոճանակի յերգը (ՍՎ. 27): Նույն վեպում մանրամասն  
նկարագրելով համբարձման տոնի հետ կապված  
վիճակահանութեան հին հեթանոսական սովորութիւն-  
ներն ու ծեսերը, նա տալիս է ժողովրդական վիճակի  
յերգերի բազմաթիւ նմուշներ, վորոնք յերգում են  
գլուղացի աղջիկներն ու հարսները հիշյալ տոնի ժա-  
մանակ: Այդ յերգերը բաժանվում են չորս հիմնական  
խմբերի.

1. Ծաղկաբաղի յերգեր, վորոնք յերգվում են  
համբարձման տոնից մի շաբաթ առաջ, ծաղիկներ հա-  
վաքելիս:

2. Փարչի գովի—յերգեր, վորոնք զուգակցում են  
վիճակահանութեան փարչի գովքին:

3. Վիճակահավաքի յերգեր, վոր ասում են գլու-  
ղացի աղջիկները մինչև համբարձման հինգշաբթին՝  
տնե տուն շրջելով վիճակներ հավաքելիս:

4. Ծաղկահանի յերգեր, վոր յերգում են նույնք՝  
բուն վիճակահանութեան հանդեսի միջոցին:

Ժողովրդական վիճակի յերգերի վերոհիշյալ չորս  
խմբերն, իրենց բովանդակութեամբ, ըստ մեծի մասին,  
սովորական սիրու յերգեր են, վորոնց մեջ կարևոր  
տեղ է գրավում նաև ծաղիկների գովքը: Զանազան  
ծեսերի ու տոների (ծաղկազարդ, համբարձում և այլն)  
հաճախ բավական մանրամասն և ազգագրական տեղե-  
կութիւններով խճողված իր յերկարապատում նկա-  
րագրութիւնները մեջ ընդ մեջ զարդարելով դրանց  
զուգակցող ժողովրդական գողտրիկ յերգերով, Պոռչյա-

նը թարմություն և բազմադանություն և հաղորդում  
իր պատմվածքին:

Ծիսական յերգերից հետո Պոռշյանի դործերում  
ուշադրություն են դրավում հատ ու կենտ թովչանքի  
յերգերը՝ Այսպես որինակ, մի տեղ նկարագրելով  
ժողովրդական բժշկության մի տեսարան, մեր հեղի-  
նակը բերում է դրանցից մեկը՝ չար աչքի դեմ (Բ.  
46): Մի այլ տեղ պատմելով յերաշտի ժամանակ անձ-  
րեվ բերելու համար դյուղացիների կողմից դործա-  
դրվող դանազան թովչանքների ու կախարդություն-  
ների մասին, Պոռշյանը տալիս է նման դեպքերում  
գործածական «Նուրին»-ի յերգի մի վարիանտ (Մվ., էջ  
97) և այլն:

Յեթե ծիսական յերգերի տեղին ոգտադործումը  
թարմություն և բազմադանություն և մացրել ժողո-  
վրդական տոների ու ծեսերի նկարագրություն-  
ներում, ապա թովչանքի յերգերը, վորոնք արտա-  
ցում են իրենց մեջ նախնական յերկրագործի  
հավատքը դեպի խոսքի կախարդական դորությունը և  
վորոնց դերն է՝ կանխել վորևե դժբախտություն կամ  
բնության վերահաս արհավիրք (հիվանդություն,  
յերաշտ և այլն), ավելի դունեղ ու առավել ախիկ են  
դարձնում ժողովրդական բժշկության և թովչանքի  
նկարագրությունները:

Ժողովրդական յերգերի վերոհիշյալ յերկու տե-  
սակներից բացի, Պոռշյանի մոտ կան նաև մի քանի  
խառը բովանդակությամբ յերգեր, ցրված նրա յերկե-  
րի տարբեր եջերում: Մի տեղ, որինակ, խոսելով Աշ-  
տարակում ամառող և Բաղդադում ձմեռող կուռնկների  
մասին, մեր հեղինակը բերում է աշտարակցի յերեխա-

ների յերգը, նվիրված դրանց չվին, վորի մեջ արտա-  
հայտված են նրանց բուն ցանկությունները յեկող  
տարվա հաց ու պտղի առատության, ցավ ու չոտի  
պակասության և այլնի առթիվ (Կ. 199): Մի այլ  
տեղ իր թոռնիկին որորոզ գյուղացի կինը յերդում և  
ժողովրդական որորոցի յերգերի նմանությամբ Պոռ-  
շյանի հորինած յերգը («Նանիկ»), վորի մեջ դրսևվոր-  
ված են այդ կնոջ լավագույն ցանկություններն իր  
թոռնիկի ապագայի մասին (ՍՎ. 138) և այլն:

Կանաչ մարգագետինները դարդարող գույնզգույն  
վայրի ծաղիկների նման, ժողովրդական յերգերի այդ  
հատ ու կենտ նմուշները գեղազարդում են մեր հեղի-  
նակի վեպերի տարրեր եջերը:

\*  
\* \*

Ժողովրդական ստեղծագործության յերրորդ բա-  
ժինը, վորի արձագանքները մենք գտնում ենք Պոռ-  
շյանի յերկերում, դա՛ ժողովրդական և աշուղական յեր-  
գերի նմանությամբ մեր վիպասանի հորինած վոտա-  
նավորներն են, տեղ գտած գլխավորարար նրա  
«Սոս և Վարդիթեր» անդրանիկ վեպում: Մի հիմնա-  
կան առանձնահատկություն, վոր ունեն հիշյալ յեր-  
գերը և վորով նրանք տարբերվում են վերևում հիշ-  
ված նյութերից, դա՛ նրանց հեղինակի խնդիրն է:  
Մինչդեռ առաջին դեպքում մենք գործ ունեյինք ժո-  
ղովրդական անանուն բանաստեղծությունների հետ,  
յերկրորդ (ներկա) դեպքում իբրև այդպիսին հան-  
դես և գալիս ինքը՝ Պոռշյանը: Հիշատակված ստեղծա-  
գործությունները բոլորն էլ նրա սեփական հորին-

վածքներն են, գրված ժողովրդական «Չանդյուլումների»  
և աշուղական խաղերի մտտիկ նմանությամբ:

Առաջին խմբի (ժողովրդականի նմանությամբ)  
հորինվածքներից են՝ «Սոս և Վարդիթեր» վեպի՝ եջ  
155—156, 231 և «Սոխակ Հայաստանի» յերգարանի՝  
1876 թ. Գ. հտ. 181—182-ում գետեղված՝ «Միրելի ջան»,  
հեռացար», «Մի դարդ ունիմ, դարման կուղեմ»,  
«Քուչումը ման ևս դալի» սկսվածքներով սիրային  
բովանդակությամբ յերգերը:

Յերկրորդ խմբի (աշուղականի նմանությամբ)  
ստեղծագործություններից են՝ նույն «Սոս և Վարդի-  
թեր»-ի՝ եջ 6—7-ը, 53—54, 130—131, 162-ում գե-  
տեղված՝ «Արի, արի, կաշաղակ», «Ինձ երում ա են  
սերը», «Բան ևմ ասում», «Ընչանք յե՞րբ» սկսվածք-  
ներով սիրային բովանդակությամբ կիսաաշուղական  
յերգերը: Բաջ ծանոթ լինելով թե առաջին (ժողովրդա-  
կան) և թե յերկրորդ (աշուղական) տեսակի յերգերի  
հորինման արվեստին, Պոռչյանը վերջիններիս նմա-  
նությամբ մեծ հաջողությամբ ստեղծել և իր սեփա-  
կան խաղերը: Ամենից առաջ այստեղ նա հարադա-  
տությամբ վերարտադրել և վերոհիշյալ յերկու տեսա-  
կի ստեղծագործությունների յուրահատուկ լեզուն ու  
վոճը: Բուն ժողովրդական և աշուղական յերգերի  
լեզվի ու վոճի նման, Պոռչյանի յերգերն ևս գրված են  
կենդանի խոսակցական լեզվով, համեմված բաղմաթիվ  
ժողովրդական մակղիրներով, ածականներով:

Իրենց տաղաչափական արվեստով և Պոռչյանի  
վոտանավորները համեմատ են բուն ժողովրդական և  
աշուղական յերգերին: Իրանք մտտիկից հիշեցնում են

7—8 վանկանի տողերով, տարբեր հատածներով (նույնահանգ, հաջորդարար գուգահանգ և այլ կադմությամբ) հայ ժողովրդական քառյակները («Չանգյուլումներ», «Մանիններ»), և Մերձավոր Արևելքի, նաև հայ աշուղների, կողմից այնքան սիրված մութամբաղ կոչվող աշուղական խաղերը (14 և 15 վանկանի, քառահատած, շեշտական, վերջին տողերի կրկնվող վերջավորությամբ):

Հիշյալ յերգերի միջոցով Պոռչյանն ավելի հաջող և դրսևվորել իր յերիտասարգ հերոս-հերոսուհիների ապրումներն ու հույզերը, բացահայտել նրանց սիրտն ու սերը, տալով այս տեսակետից ուշագրավ բանաստեղծական նկարագրություններ:

Մի քանի խոսք ել մեր վիպասանի գործերում տեղ դառն ժողովրդական ավանդությունների ու դրույցների մասին: Այս կամ այն վայրի, տեղի (բերդ, լիճ և այլն), ժողովրդի բնավորության և այլնի նկարագիրը տալիս՝ Պոռչյանը, ոգավելով առիթից, մեջ բերում այդ առթիվ գյուղացիների մեջ յեղած և սերնդե սերունդ, բերանից բերան բանավոր կերպով ավանդվող առասպելներն ու դրույցները: Մի տեղ, որինակ, խոսելով Այդրգյուլի մասին, նա տալիս է վերջնի մեջ բնակվող հրեղեն ձիերի՝ Քյորսղու Ղոթի, Արագածի կատարի լճի ու Այդր-գյուլի ջրերի մեջ յեղած կապի վերաբերյալ ժողովրդի մոտ յեղած յերկու տարբեր ավանդություններ (ՀԽ, 28—29): Մի այլ տեղ նկարագրելով կարբեցիների խորամանկությունն ու ճարպկությունը, Պոռչյանը մեջ է բերում նրանց բնավորության այդ կողմի մասին պատմվող

յերկու փոքրիկ զրույցներ (Կարբեցու և սատանայի վեճք. Բ. 18—19, 94—97) և այլն:

Ժողովրդական ավանդությունների ու զրույցների սղտագործումը հարստացրել ու հետաքրքրական և դարձրել Պոռշյանի գրվածքներում պատկերված տեղադրական-աշխարհագրական միջավայրը, ժողովրդի հավատալիքները և այլն:

\*  
\* \*

Պոռշյանի կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրությունը բացեց մեր առաջ ծանոթությունների այն դաշտը, վոր ունեցել և նա ժողովրդական բանահյուսության բնագավառում: Մենք պարզեցինք, թե ինչպես մեր հեղինակը մանկական հասակից մինչև իր կյանքի վերջին տարիները մտտիկ շփման մեջ լինելով ժողովրդի հետ (զյուզում թե քաղաքում), հետզհետե հարստացրել ու ճշտացրել և իր ֆոլկլորային պաշարը: Տեսանք, թե ինչպես, լավ ըմբռնելով ժողովրդական բանահյուսության արժեքն ու արժանիք՝ Նրը, հատկապես ժողովրդի կյանքը պատկերող զրվածքում այն սղտագործելու կարևորությունը, Պոռշյանն իր վեպերում լայն տեղ և հատկացրել դրան:

Ամփոփենք այժմ այդ առթիվ մեր արած դիտողությունները:

Ժողովրդական բանահյուսության սղտագործումը՝

1. Ավելի ժողովրդային և դարձրել Պոռշյանի լավագույն գործերը («Մոս և Կարդիթեր», «Հացի խնդիր», «Ցեցեր» և այլն):

2. Առավել ցայտուն ներկայացրել 19-րդ դարի առաջին կեսի հայ գյուղի հասարակական-տնտեսական կյանքի և դասակարգային փոխհարաբերությունների գեղարվեստական պատկերը:

3. Կենդանի ու գունեղ ցուցադրել նույն գյուղի աշխատանքային առօրյայի, առտնին կենցաղի, նիստ ու կացի, ծեսերի ու հավատալիքների նկարագիրը:

4. Հարստացրել և մեր վիպասանի լեզուն, ճոխացրել ու պատկերավոր դարձրել նրա վոճը, սահուն ու գրավիչ՝ պատմվածքը:

Հիմնականում հարադատ մնալով իր ոգտադորժած նյութերի բովանդակությանը, Պոռշյանը դրանով իսկ փրկել և կորստից հին Աշտարակի ժողովրդական բանահյուսության մի շարք արժեքավոր բեկորները:

Այս տեսակետից միանգամայն հասկանալի ու բնական է այն փաստը, Վոր մեր անցյալի դրականության դեմոկրատական հոսանքի յերկու պայծառ ներկայացուցիչները՝ հեղափոխական հրապարակախոս Մ. Նալբանդյանն ու դեմոկրատ զրոյ Ղ. Աղայանը՝ Պոռշյանի ստեղծագործությունների կարևոր արժանիքներից մեկը համարել են դրանց ժողովրդական բանահյուսության նմուշներով համեմված լինելու հանգամանքը:

Այսպես, իր նշանավոր «Կրիտիկա»-ում, նվիրված «Սոս և Վարդիթեր»-ի վերլուծմանը, Մ. Նալբանդյանը նրա «այնքան շատ և անհակառակելի» արժանավորությունների մեջ մեծապես դնահատում և նաև ժողովրդական բանահյուսության տեղին և հաջող կերպով ոգտադործված լինելու մոմենտը: Ահա թե ինչ և գրում նա իր հոդվածում. «Ար-

գո հեղինակը, հեռակելով սլ. Արուսյանցի ուղղութեան,  
իր բովանդակ գործի մեջ միշտ աչքի առաջև ունեցել է  
գործ դնել ազգային առածներ, ասացածներ: Մենք  
լիասիրտ շնորհակալութեան ենք հայտնում մեր հե-  
ղինակին: Բացի սորանից, «Սոս և Վարդիթեր»-ի մեջ  
շատ կան սիրուն ձևեր և վոճեր, վորոնք դրեթե ամեն  
տեղ գործ են անվում ազգի մեջ»:

Քիչ անց, խոսելով նույն վեպում տեղ դառած  
ժողովրդական յերգերի մասին, Նալբանդյանն ավելա-  
ցնում է. «Պ. Պոռչյանցի վոտանավորքը մեծ հարա-  
զատութեան ունին Արարատյան աշխարհի և տե՛ղ  
տեղ ել ամբողջ ազգի վոգու և ձևի հետ», և իբրև  
նմուշ մեջբերելով եջ 74-ում դետեղված «Ջանգուլու-  
մը», շարունակում է. «Շատերը կան նույնպես ազնիվ,  
նույնպես դեղեցիկ, բայց մենք ուզում ենք միայն  
«Նանիկը» մեջ բերել (խոսքը ժողովրդական սրբոցի  
յերգերի նմանութեամբ հորինված, Պոռչյանի՝ վերը  
մեր հիշատակած յերգի մասին և—Ա. Ղ.), ուր հայ  
պառավի վոգին ու սիրտը ամեն հարազատութեամբ թա-  
փել է հեղինակը»:

«Սոս և Վարդիթեր»-ի հիշյալ կողմը (ժողովրդա-  
կան բանահյուսութեան ոգտադործումը) բարձր է գնա-  
հատում նաև Աղայանը: «Վորքան շնորհակալ պետք է  
լինեն մեր ապագա սերունդները Պոռչյանից, վոր  
հենց ազգային յերգերին ու սովորութեաններին և  
նվիրել իր աշխատութեանը»<sup>1</sup>, — գրում է նա:

1 Ղ. Աղայան, «Պերճ Պոռչյանի և նրա «Սոս և Վարդի-  
թերի մասին» տես. «Թղթուր», 1888 թ., № 8-9]»

Իր ժամանակի յերիտասարդ գրողներին Աղայանը խորհուրդ է տալիս, վորպեսզի՝ «Պոռշյանի որինակին հետեւեն, նկարագրեն իրանց ծննդարանը, իրանց հայրենի գավառը, նրանց ներքին կյանքը, սովորությունները, յերգերը, ավանդությունները, նրանց սիրո և ատելության, ուրախության և տխրության առիթները: Այդպիսիներին ասլադայում սպասվում է անմահ անուն, մեծ փառք ու պատիվ: Ասլադան մեզ պես ասերախտ, մեզ պես միամիտ չի լինի»<sup>1</sup>:

Աղայանն արդարացի յեր: Նրա ակնարկած ասլադան այսոր բարձր է գնահատում Պոռշյանին, վերջինիս ստեղծագործությունների խորը ժողովրդայնության — աշխատավոր հայ գյուղացու լավագույն ձգտումների, նրա կյանքի, բառ ու բանի, նիստ ու կացի, սովորությունների ու հավատալիքների գեղարվեստական ճշմարտապատում վերարտադրության համար:

---

1 Ղ. Աղայան, «Գերձ Պոռշյանի և նրա «Սոս և Վարդիթերի մասին», տե՛ս «Աղբյուր», 1888 թ., № 8—9



Բ Ն Ա Գ Ր Ե Ր



ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՅԵՐԳԵՐ



ՎԻՃԱԿԻ ՅԵՐԳԵՐ

(«Ջանդյուլու մներ»)

1

Խնձոր ունիս կծած ա,  
Ջան դյուլում ջան, ջան,  
Չորեք կողմն երծաթած ա,  
Ջան ծաղիկ, ջան, ջան,  
Ախպերս ուզեց չի տվի,  
Ջան դյուլում, ջան, ջան,  
Ասի յարի դրկած ա,  
Ջան ծաղիկ, ջան, ջան:

2

Այ տղա, հիլ անիլ տուր—  
Մատնաչափ գիր անիլ տուր,  
Ինձնից ել քեզ ճար չի կա—  
Քաքուլդ վեր անիլ տուր:

3

Յես աղջիկ եմ, ալ կուզեմ—  
Բարակ միջկիս շալ կուզեմ,  
Յերբ յես եկա ձեր տունը—  
Վոսկին սարեսար կուզեմ:

4

Կիրակի ել պաս կըլնի՞—  
Երծաթից լավ թաս կըլնի՞.

Վարդիդ մեռնի վարդապետ—  
Սիրածը չհաս կըլնի՞:

5

Քանաքեռ բարձր տեղ ա —  
Ձուրը հիվանդին դեղ ա,  
Սիրած սիրածին չեն տալ —  
Ես ի՞նչ անիրավ գեղ ա:

6

Են սարը բարձր սար ա —  
Տակը դնջած բար ա,  
Յես քեզ թաքուն սիրեցի —  
Բաս ո՞վ արավ աշխարհ:

7

Իմ յարն ինձ յար պտի —  
Ձեռումը Քանար պտի.  
Իմ յարի կաննած տեղը —  
Մեկ չինարի ծառ պտի:

8

Այ տղա, դու հաղար ըլնիս —  
Իմ ախպոր սաղար ըլնիս.  
Թե ինձանից ջուկ յար բռնես —  
Դու սրտապատառ ըլնիս:

9

Քաքուլիդ կալին մեռնիմ —  
Յերեսիդ խալին մեռնիմ.  
Լսել եմ կարդացող ես —  
Յաղմոսիդ ծալին մեռնիմ:

10

Ամպել ես ամպի նման —  
Շաքար ու դանդի նման.

Իմ նանն ինձ վոնց ա պահել—  
Ծալած դյուլբանդի նման:

11

Կաննել եմ ախա բախա—  
Շալաղուս տուտը կախ ա.  
Շեկ տղա, կարմիր աղջիկ —  
Թող բոնենք իրտը յախա:

12

Ամպել ա ձուռն չի գալիս—  
Մթնել ա տուռն չի գալիս.  
Ես անտեր բարձի վրա—  
Առանց յար քուռն չի գալիս:

13

Վաչխարն արել եմ բակը—  
Դեմ տվել սելի ակը.  
Ով իմ սիրածս առնի—  
Չի վելի ղլխի թագը:

14

Կաքավը կաննել ա քարին—  
Կտուցը լիքը արին.  
Մի աղլուխ վարդ եմ քաղել—  
Ղրկել իմ ախպոր յարին:

15

Իմ միջկինս քամար ա—  
Քու ունքերտ կամար ա.  
Ա՛յ տղա, ի՞նչ ես միտք անում—  
Իմ ջանս քեզ համար ա:

16

Մտիկ տվեք են դադին—  
Պուտուտուրիկ բողադին.

Հողն են հորն ու մոր գլխին —  
Աղջիկ կըտա չորմաղին:

17

Կաննելի եւ շարձը սարին —  
Չու խիղ նախշու կարին.  
Հետու տեղից ես դալիս —  
Ո՞ւր ա բերածդ բարին:

18

Քաքուղ թափ ես տալիս —  
Չկոներդ ծափ ես տալիս.  
Եսոր եքուց քցելով —  
Ամեն որ խափ ես տալիս:

19

Գութանը հաց եմ բերել —  
Բերանը բաց եմ բերել.  
Տես քեզ ի՞նչքան եմ սիրում —  
Չկնով տապկած եմ բերել:

20

Կանանչ խառեն քիսացու —  
Կարմիր կովը մսացու.  
Յես քո հորը հարսնացու —  
Դու իմ մորը փեսացու:

21

Յերթկի վրեն թինդնել ես —  
Յերթկի կոճը բոնել ես.  
Հերս քեզ աղջիկ չի տալ —  
Ափսոս քունդ կարել ես:

22

Համբարձում յայլա, յայլն ջան, յայլն,  
Համբարձումն յեկել ա, մեր բաշին կաննել,

Լաչակ տ գցել մեկ մեկի վերա,  
Մինը տակեանց, մինը վերեանց.  
Քա խաթուն Գյուլնդ, հունարդ երեաց,  
Համբարձում յայլն, յայլն ջան, և այլն:

23

Քու սիրուդ ինձ կսպանեմ —  
Աղջի, քու չարը տանեմ.  
Դու իմ խոսքիս կամ արի —  
Նանիդ ուղի կանեմ:

24

Ձիթ մինթանեդ հնամաշ ա —  
Ունքերդ դալամքա ա.  
Աղջիկ, ի՞նչ ես միտք անում —  
Իմ ջանս քեզ փեշքաշ ա:

24

Աղջի, ի՞նչ լավ մաղ ունիս —  
Սոխակի փարվաղ ունիս.  
Խոսքիս ջուղար չես տալիս —  
Ի՞նչ շատ եշխ ու նաղ ունիս:

26

Մաղերդ վոլորվել ա,  
Աչքերդ բոլորվել ա.  
Իրեք որ ա չեմ տեսել —  
Իմ սիրտս մոլորվել ա:

27

Ամպել ես ամպի տակին —  
Ծուռեկդ ծնկանս տակին.  
Յես քեզ ի՞նչ տեղ սիրեցի —  
Խնձորի ծառի տակին:

Յարս զրկել եմ թթի —  
 Աղջի, քու վիզդ փթի.  
 Վորտեղ խաղալու գնաս —  
 Ման արի յարդ քթի:

Պատի աղջիկ, գալու՞մ ես —  
 Մազերդ սղալու՞մ ես.  
 Գեղարդի դաղարին գաս —  
 Միսն վոսկորից հանու՞մ ես:

Պատի աղջիկ, լավ աղջիկ —  
 Ունիս մենձ համբավ, աղջիկ —  
 Իմ քեզ ծածուկ սիրելիս —  
 Ի՞նչու ելավ, չավ, աղջիկ:

Աղջի, դու շատ սառն ես —  
 Արարատյան գառն ես.  
 Խիստ ճարտար լեզու ունիս —  
 Սոխակի բարբառ ունիս:

Ջուրը կը գա քարիցը —  
 Աղջիկ, դու կը գաս սարիցը.  
 Սերս ի՞նչպես հովանա —  
 Գեղպես սոխակ ճարտարիցը:

Ես գիշեր լուսնակ գիշեր —  
 Ձինն յեկել գետինը նախշել —  
 Դռնդ դեմ արա պաշեմ —  
 Կեռ ունքեր, կարմիր թշեր:

Սիրելի եմ սերն յերեսին,  
 Ռեհան թերն յերեսին,  
 Ով իմ սիրածն ինձ չի տա,  
 Աստու կրակն յերեսին:

Յերթիկ յերթիկ բռնել ես,  
 Յերթիկա տակին կռնել ես.  
 Իմ հանք քեզ աղջիկ չի տալ,  
 Անուշ քունդ կարել ես:

Ծաղիկ ունիմ, ալա ա,  
 Ալա չի, ալվալա ա.  
 Յար բռնիւք լավ կըլի,  
 Բաց թողալք բալա ա:

Եսոր ուրբաթ ա, սլաս ա,  
 Ծոցինդ երծաթե թաս ա,  
 Հողիդ դատի, վարդասլետ,  
 Խի՞ իր ասուամ չհաս ա:

ՍՎ. 104 – 114:

ԿՈՌԻՆԿՆԵՐԻ ՅԵՐԳԸ

Բարով գնաք, բարով դաք,  
Վտաներդ խերով ըլի,  
Ճով ու շոռը պակաս ըլի,  
Հացն ու պտուղը շատ ըլի,  
Հարսանիքն ախպորս ըլի,  
Մահենիքը տատինս ըլի:

Կ. 199.

Ն Ո Ւ Ր Ի Ն

Նուրին նուրին եկել ա,  
Աջբա հուրին եկել ա,  
Շիլա շապիկ հաքել ա,  
Կարմիր գոտիկ կապել ա:


Յեղ բերեք պորտը քսենք,  
Ջուր բերեք գլխին ածենք,  
Մեր նուրինի փայլ տվեք,  
Ուտենք, խմենք, քեֆ անենք:

Ս. Վ. 97 — 98:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՇՆԵՐ

ՅԵՎ,

ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ



## Ա

Աղբալի՝ ձենը վոր աստված լսեր, վարդավառին  
 ձյուն կը գար. (Յ. 307):

Ա՛խ աստված, փլավն ճւմ ա տալիս, իշտանն ում.  
 (ՀԽ. 172):

Ահը շատ ե (վեր ե), քան թե (քան) մահը. (Կ.  
 222, Յ. 183, Հն. 289):

Ահի տարին ի՞նչ եյիր, թե մահի տարին ի՞նչ  
 ըլիս. (ՀԽ. 17):

Աղ ու հաց, սիրտը բաց. (Հն. 32):

Աղեն ասաց՝ քշի ձորը, քշի ձորը (Իրնկ. առած.  
 Կ. 242):

Աղջիկ բերող մոր որոցքը կրակ ընկնի. (ՍՎ. 91):

Աղջիկը վոր կա՝ անկտրիլ ձմերուկ ա. (ՀԽ. 157,  
 Յ. 256):

Աղջիկը վոր կա՝ շուշա յե, վոր կոտրվեց, չի  
 կարկատվիլ (Հն. 165):

Աղվեսը մարագումը (մեր մարագումը) ճուտ ա  
 (ձագ) հանել՝ մեր թագու հղությունիցն ա. (Յ.  
 155, ՀԽ. 262):

Աղքատ՝ հպարտ. (Ն. 34):

Ամառը մարդս խանի թաղի ըլի, ձմեռը՝ վարդա-  
 պետի կատու. (Կ. 423):

Ամեն բանի սկիզբն ե դժվար. (Շ. 140):

Ամեն ժամանակ տատը գաթա չի ուտիլ (ՄԱ. 40):

Ամեն մարդի չվանով հորը չեն մտնիլ. (ՍՎ. 45)

- Ամեն շապիկ մարմնին կպած է. (Հն. 238):
- Ամեն պսպղացող վոսկի չէ. (Հն. 162):
- Անաստված տեղը կաց, անարխա տեղը մի կենալ.  
(Հն. 91, ՀԽ. 332):
- Անհավատ բանին մի հավատալ. (ՀԽ. 368):
- Աշխարհքիս մալն (գանձն ու հարստությունը)  
աշխարհքումը պտի մնա. (ՀԽ. 96, Բ. 248):
- Աշխարհքս առ ու տուր է. (Հն. 255):
- Աշխարհքս առ ու տուր ա, առ ու կուլ չի. (ՍՎ. 23):
- Աշխարհքս խելոքությունով ա (է) կերել. (ՍՎ.  
29, 61, Կ. 460):
- Աշխարհքս նարդիվան ա (սանդուխք է), մինը  
նի ա ընում (մինը վեր է յեղնում), մինը (մյուսը)  
վեր (ներքև) գալիս (մինը ցած է իջնում). (Բ.  
202, ՀԽ. 5, ՄԱ. 26):
- Աշխարհքս տես և ուս է. (Հն. 119):
- Աշխարհքս փոխ հաց ա, վոնց կանես, ընենց կու-  
տես. (ՍՎ. 81):
- Աչքը (ինչքան) բարձրանա, բարձրանա, ունքից  
վերև չի կարող գնալ (բարձրանալ). (ՀԽ. 26,  
ՄԱ. 26):
- Աչքիդ վերեն ունք (հոնք) կա.  
(ՀԽ. 46, Կ. 110, Հն. 34, 84):
- Աչքից ել պրծանք, աչքացավից ել. (Կ. 102):
- Աչքից հեռու, սրտից հեռու. (Կ. 492):
- Աչքն ինչ տեսնի, են կանի. (ՍՎ. 185):
- Աչքն ինչքան բարձրանա՝ ունքից վերև չի բար-  
ձրանալ. (Յ. 185)
- Առաջնորդը յես եմ, բակլեն խաշած եմ ցանում.  
(Յ. 221, ՀԽ. 27):

Առ ու տուրն ախպեր են, ընչանք տաս վոչ,  
առնել ել չես. (ՀԽ. 47):

Առաւոտը մերոնք մեռնին, ճաշին նրանցը (Շ. 230):

Ասեղ վայր ձգես, գետինը չի ընկնիլ. (Շ. 194):

Աստված փլավն ում ե տալիս, ախորժակըն ում.  
(Բ. 173):

Ավելի թիքեն փոք չի ծակի. (ՀԽ. 244):

Արեը (արեգակը) վատ տեղ մեր մտալ. (ՀԽ. 324,  
329, ՀԶ. 24, Շն. 131):

Արեը փոք յեկնի, աստղերը կխավարեն. (Հն. 22):

Արյունն արնով չեն լվանալ. (Բ. 337):

Արջն իր ահեն կգոռա. (Կ. 147, ՍՎ. 169, ՄԱ. 14):

Արան են գլխից եմ հնձել. (Յ. 98):

## Բ

Բարլու բարլիա թափմասն, դունիա ախավայինան  
գեչար—յեթե ամենն իր հարմարը չգտնի,  
աշխարհքս ախ ու վայով անց կը կենա.  
(ՍՎ. 251):

Բանը բանին (բան) շհանց կտա. (ՍՎ. 52, ՀԽ. 27):

Բաններս աջ ա, ով հաչում ա՛ հաչա. (ՍՎ. 28):

Բանն սվ անի—յես ու դուն, հացը սվ ուտի—յես  
ու դուն. (ՍՎ. 22, 82):

Բարեկամացանք՝ բարերարացանք. (ՍՎ. 87, ՀԽ.  
129):

Բզի ղլխին բոնցքով տալ չի ըլնիլ. (Կ. 351, ՀԽ.  
334):

Բլբուլն իր դարդը կը լա, ագռավը դառ դառ կա-  
նի. (ՍՎ. 97):

- Գայլի ձեռքից պրծանք, արջի հանդիպեցանք.  
(Հն. 111):
- Գայլի աչքերն են ազվեսին վարպետ շինել (ՄԽ.12),  
Գառնով փլավն ել ամեն որ ուտիլ չի ըլում.  
(Կ. 461):
- Գեղ կանգնի, գերան կը կոտրի. (ՀԽ. 261, Յ. 80):  
Գեղը գծվելիս՝ մոլլին ա հարցնում, մոլլեն վոր  
գծվի՝ ռւմ պտի հարցնի. (ՀԽ. 334):
- Գեղի են դլուխը դնա, յերեխիցը բան հարցրու.  
(Կ. 207):
- Գելից փախա, արջի ճանդ ընկա. (ՍՎ. 281):
- Գյահկիր (յես մնացող) ձին քարվան չի կարող  
կտրիլ. (Յ. 306):
- Գոմեշ կտար, մեղա աստծու չեր ասիլ. (ՍՎ. 295):
- Գող՝ սիրտը դող. (ՀԽ. 157, 176, Յ. 56):
- Գողը գողից գողացավ, աստված վերնից դարմա-  
ցավ. (Բ. 250, 262):
- Գողը վոր տանու ըլի, յեղն յերթկովը դուրս կը  
քաշի. (Կ. 74, ՍՎ. 117):
- Գողն ինչ կուզի՝ մութը գիշեր. (Բ. 8, ՀԽ. 272,  
ՍՎ. 241):
- Դաղած յեզը լավ կալ կանի. (Բ. 72):
- Դառը քրտնքի բերած կոպեկը ուզտի պուչ ե՛ չի  
յերկարիլ. (Բ. 123):
- Դարդակ ամբար, դարդակ ջվալ. (ՍՎ. 92):
- Դարդակ խոսքը քամին տանի. (Յ. 82):
- Դարդակ փետին շուն չի հաչալ. (Բ. 230, ՀԽ. 262):
- Դեր դարբնոցը չի գնալ. (Կ. 206):

Ե

- Եզուցվան բանին ձյուն ե յեկել. (Բ. 98):  
 Ել են ջուրն ե, ել են ջրադացը. (Կ. 68):  
 Ելինան դարա գյուն բայրամ դիր—համայնքի  
 հետ սև սրն ել դատիկ ե. (ՀԽ. 278):  
 Եծն իր վտախցը կախ կըտան, վոչխարն իր վտախցը.  
 (Հն. 88):  
 Են ծառին կուող մեկնի, վոր կը հասնի. (Կ. 491):  
 Են վաղ եր, եշը կաղ եր. (Կ. 125):  
 Եշը մատաղ չի ըլնիլ, եշագինը մատաղ կըլնի.  
 (ՀԽ. 51):  
 Եշը ցեխից հանել. (Հն. 240):  
 Ես ամպը կարկտի ամպ ա. (Կ. 170):  
 Ես խմորը դեռ շատ ջուր վեր կունի. (Կ. 494):  
 Ես ուզտն ամենքի (քո) դռանն ել չոքելու ա.  
 կչոքի). (ՍՎ. 255, ՀԽ. 53Զ):  
 Ես շունն ել են շանիցն ե, յերկուսն ել մի տա-  
 նիցը. (ՀԽ. 60):  
 Եսորվա շահին եզուցվա մանեթից լավ ա. (ՀԽ. 65):  
 Եսորվա սև փողն եզուցվա սհարդանից (30 կ)  
 լավ ե (Բ. 98):  
 Եսոր բոշա, եզուց փաշա. (Բ. 250):

Զ

- Զառ դադրի, դարգյար բիլար—վոսկեղենի արժեքը  
 վոսկերիչը կիմանա. (ՍՎ. 22):  
 Զոռով արջը կալ չի լծվի. (ՀԽ. 227):

Ը

- Ընչանք եդ բանը կլինի՝ ուղտի պոչը գետինը կը հասնի. (Սվ. 9):
- Ընչանք խելսբը միտք կանի, գիծը տղին հարսանիք կանի. (Սվ. 253):
- Ընչանք չիթը կըթրջի, հիվանդի հողին կը թռչի. Սվ. 9):

Թ

- Թե ուրանամ՝ յերկու՝ աչքով կուրանամ. (Սվ. 20):
- Թեկը վոր բարակի՝ կըկտրվի. (Կ. 122):
- Թթու յե, թան չի, ամեն մարդի բան չի. (ՀԽ. 42):
- Թուղթը շուռ տուր, արասին կուլ տուր. (Սվ. 66):
- Թուղթն ել ա ձեռին, կալամն ել. (ՀԽ. 45):
- Թունդիրն ածես՝ շորահոտ չի վեր ըլի (չի գալ). (ՀԽ. 241, Յ. 236):
- Թուրքն ասում ա՝ հընկերը հընկերին թե չը գանի, աշխարհքս ախ ու վախով անց կը կենա. (Յ. 186):
- Թրի յերկու դիհն ել կտրում ա. (ՀԽ. 330):

Ի

- Իմ բանն աչ ա (ե), ով կուղի թող հաչա (թող ով կուղի հաչե). (Կ. 148, Յ. 200):
- Իմ մատը մտած փուշը քու ջանն ա ծակել. (Կ. 93):
- Իմացել են Ալին մեռել ա, համա չեն իմացել Ալին ա, թե Մահմադ Վալին. (Սվ. 81):
- Ինչ բրդես, այն կը խոթես. (Շն. 18):
- Ինչ կուղեն անեն՝ մեր վոչխարին վնաս չը տան. (Կ. 113):
- Ինչ վոր գնում ա՝ բաղիցն ա գնում, բաղման-

չուցն ի՞նչ ա գնում. (ՀԽ. 335):

Ինչ վոր պակասի, բաղիցը կը պակասի, բաղմանչու  
ի՞նչը պետք և պակասի, (Բ. 261):

Ինչ ցանկա, են կը հնձեա. (Կ. 519):

Իշին ասին աչքդ լիս, քեզ քուռակ ա ելել, ասեց՝  
ի՞նչ անեմ, վոր իմ բեռն իմ միջքիցը պակ-  
սիլ չի. (ՍՎ. 120):

Իշին հարսանիք համեցեք արին, ասեց՝ իհարկե  
չուր կրելու յեք տանում. (ՀԽ. 363):

## Լ

Լավություն արա՛ ծովը դցիր, ձուկը վոր չիմանա,  
աստված կիմանա. (ՄԱ. 50):

Լավ տեղը կաշառք տուր՝ ներս գցի, փիս տեղը  
կաշառք տուր՝ դուս քցի. (ՍՎ. 205):

Լեզուդ ոճը ծակիցը կը հանի. (Կ. 160):

Լո, լո, քրդի տղին ել, լո լո. (ՀԽ. 73):

## Խ

Խաչին տերը գորավոր կանի. (ՍՎ. 100, 319):

Խաչը խաչապաշտին խոռվ կը կենա. (ՀԽ. 112):

Խերը տեսնի՛ շերապետը, ջարմեն քաշի կարա-  
պետը (ՀԽ. 112):

Խերն ու շառն ախպեր են. (Ց. 27):

Խողի գլուխը խալիչի վրա կենալ չի. (ՀԽ. 192,  
ՀԽ, 366, Կ. 164):

Խոսքը պարանի չի դրվի. (Կ. 245):

Խոսքի սուտը չի ընիւ սխալը կընի. (ՍՎ. 170):

Խոսքն եշ նիւնիւ չի, իշիցը վեր գալըն ա. (ՍՎ.  
134):

Խոսքով փլավ չի յեփվի, յուղ ու բրինձ և հար-

կալոր. (Բ. 269):

Խոտորնակին խոտորնակ. (Հն. 131, Շն. 221):

Խուփը գլորվել ա, կճուճը գտել. (ՀԽ. 287):

Խուփը քարին առավ. (Յ. 113, 150, 238, ՀԽ. 328, Շն. 229):

## Մ

Մամը յերկար, խելքը կարճ. (Հն. 37):

Մառը դանգատ գնաց ասածու մտա կացնի ձե-  
նիցը, վոր իրան կըտրում ա, տակց՝ կոթը քե-  
զանից ա. (Յ. 155):

Մասի վորդը իրանից և գոյանում. (Շն. 26):

Մովն ընկնողը ձեռները կածի. (Բ. 150):

## Կ

Կակղես (կը կակղես), կուտես. (Հշ. 190, Շն. 158):

Կաղ իշով քարվանի խառնվել. (Հշ. 232):

Կաղը կամբջի վրա կը բռնեն (ճանկեն). (Յ. 273,  
Հշ. 140, ՀԽ. 584):

Կամ աղն և պակաս կամ մաղը. (ՀԽ. 329):

Կաշաօքը մութը տեղը լիս կը տա. (ՍՎ. 201, Կ.  
542, Հն. 136, Շն. 65):

Կատվին խաղ ա՛ մկան մահ ա. (Յ. 101):

Կեսուրս մեռավ, տեղըս լինացավ. (Կ. 148, 518,  
523):

Կերակրի վրա սառը ջուր ածել. (ՀԽ. 180):

Կճուճը գլորվեց, խուփը գտավ. (Յ. 186, Հշ. 73,  
Բ. 24, 343):

Կնիկը տղամարդի հողին ա. (Յ. 46):

Կովը հորթին, հորթը կովին, գլուխը ցավի նախ-  
րարածին. (ՍՎ. 18):

Կրակ ել դառնա՛ երիւ չի կարող. (Կ. 81):

Կրակի առաջին չախմախի չեն տալ. (Յ. 36, Կ. 280):

Կրակին մոտ դնացողը կերվի. (Յ. 306):

## Լ

Հագար խոսողը կը ճաքի, աշտարակցին տասն որ  
խոսեցնես՝ վոչ ինքը կը դադրի, վոչ քեզ կը  
ձանձրացնի. (Կ. 458):

Հանաքը չանաք ե դառել. (Կ. 489):

Հաղացող թաղին հորս չի անիլ. (ՀՆ. 169):

Հառաջ մերը՝ հետո մերոնցը. (ՀՆ. 129, 513):

Հասկացող վորդին հոր աջու աչքն ե. (ՀՆ. 290):

Հավն տունը կենա, կուտն ուտի. (ՍՎ. 43):

Հարսանիքն ու մահենիքն ախպեր են. (ՀՆ. 591):

Հացը հացարարին տուր, մինն ել ելելի. (ՍՎ. 82,

252, Կ. 205, 214, 463):

Հեսար դինար-դինար, բաղձի՞ թուման-թուման  
— հաշիվը կոպեկ - կոպեկ, պարզե՞ր՝ թուման  
-թուման. (ՀՆ. 41):

Հերերը ժուռ կերան, վորդկերանց ատամն առավ.  
(ՀՆ. 598):

Հին դարմանը քամուն չեն տալ. (Յ. 229, 336):

Հինգ մասն ել իրար բարերար են, վորը կտրեա՛  
կը ցավի. (ՍՎ. 282):

Հունքը շինելու փոխարեն՝ աչքը հանել. (Հն. 234):

Հունարը փուշ կուլ տալը չի, հունարը մարսելն  
ա. (Կ. 154):

Զ

- Զուկը ծովումը կը մեծանա. (Շն. 191):  
 Զվաճեղի խաթեր թավի կոթը կը պաշեն. (ՀԽ-  
 193, Բ. 179, ՍՎ. 23, Շն. 48):

Ղ

- Ղոնաղն աստծունն տ. (ՀԽ. 558, 564):  
 Ղամաթի ճամփեն կապիլ չեն. (ՀԽ. 15):

Ճ

- Ճամփի կիսիցը յետ դառնալը նամարդութունն ա.  
 (ՀԽ. 338):  
 Ճանճն անում և, ճիճուն կրում. (ՀԽ. 468):  
 Ճաշն ու տելուց հետո ձեռին ջուր չեն անիլ. (ՀԽ. 8):  
 Ճշմարիտ խոսողի տակին մի Արաբըստանի ձի պի-  
 տի. (Ց. 306):  
 Ճրագի առաջին չախմախի չեն տա. (ՀԽ. 331):

Մ

- Ման յեկողը յա շորին կը ճարի, յա՛ փորին. (ՍՎ. 43):  
 Մանիշակ—գարնան շիշակ. (ՍՎ. 16):  
 Մատդ մարդի աչքը կոխելու լինիս, չի նշմարիլ.  
 (Շն. 64):  
 Մարդ իր մեռնելու որի վրա չպիտի խոսի. (Կ.12):  
 Մարդ մարդի դարդ չի դիտենալ, կես քշերին  
 ժամ կը կանչի. (ՍՎ. 14):  
 Մարդամիջի մարդս ըլի, հագար թուման պարտքս  
 ըլի. (ՀԽ. 187):  
 Մարդս մարդով ա. (Հն. 221, ՀԽ. 284):

Մեծ տունը մեծ ընտանիք կուենենա. (Յ. 174):

Մեկ ձեռքով յերկու ձմերուկ բռնել. (Հն. 231):

Մեղր ծախողը մատը կը լպստի. (Յ. 85, Հ. 27, Բ. 261):

Մեյդանիդ գյորա ձիդ քշի. (ՍՎ. 35):

Մենծ եշն ախոռումն ա մնացել. (ՀՊ. 547):

Մեշի ծաղիկը շատ ա, համա մարալներն իրար թավաղա յեն անում. (Կ 464):

Մեջ ուտիլ՝ դրադ ման գալ. (ՀՊ. 547):

Մեջք մեջքի կը տաք՝ սարեր շուռ կը տաք. (ՀՊ 394):

Մի առվով վոր մի անգամ ջուր ա գնացել, ելի կերթա. (Կ. 111, 460, Յ. 229):

Մի դարդը մարդ չի սպանիլ. (ՀՊ. 594):

Մի ծառից համ թի կըլի՝ համ հորսըլի. (Կ. 133, 137):

Մի ձեռը ծափ չի տալ. (Հն. 213, Յ. 289, ՀՊ. 284):

Մի տան շերեփ վոր յերկու տանդկան ձեռքն ըլնի, շուտ բաժանք կըլնի. (ՍՎ. 4):

Մի փունջ ծաղկով մայիս չի դա. (ՍՎ. 239):

Մինը ըռի, մինը՝ բռի. (ՍՎ. 35):

Մինչև խելոքը միտք կանի, գիժը տղին կը պսակի. (ՀՊ. 324):

Մկան ծակը 100 (1000) թումանով և առնում (կաննի, առավ). (Կ. 86, 550, Յ. 273 Հն. 20, ՀՊ. 218):

Մոտիկ հարևանը լավ ա հեռու բարեկամիցը. (ՀՊ. 129):

Մուկը ծակը չեր մտնում, ցախավելն ել պոչիցը կապեցին. (ՍՎ. 72):

- Յեզը ծախել, հողին թափել. (ՀԽ. 21):
- Յեզը վեր ա քաշում (վեր են կացնում), տակիցը հորթ ուզում. (ՀԽ. 21, ՍՎ. 196, ՄԱ. 10):
- Յեզը վոր վեր ընկնի, դանակավորները կը շատանան. (Կ. 160):
- Յեկել ե մեր մեշեն, կըսովորի մեր փեշեն. (Յ. 218):
- Յերկաթը տաք տաք կը ձեծեն. (ՀԶ. 183, Յ. 272, ՍՎ. 303, ՀԽ. 394, 542, 558, Կ. 141, 143, Շն. 88):
- Յերկու դոչի դլուխ մի պղնձում չեն յեփիլ. (Բ. 188):
- Յերուսաղեմն ել առանց շների չի. (ՀԽ. 343):
- Յա դառն դյարաք՝ յա դոռն — կամ վոսկի պիտի ունենաս կամ ույժ. (ՀԽ. 332):

## Ն

Նալին ել ես խփում, մեխին ել. (Կ. 460):

## Շ

- Շան հետ աղպերացի, փեռը ձեռիցդ մի վեր քցիլ. (ՍՎ. 197, Յ. 128, Կ. 205, ՄԱ. 19):
- Շանիցը մազ պոկելը խեր ե. (Բ. 98):
- Շանը կտան՝ տիրոջը խաթր կանեն. (ՍՎ. 197):
- Շատ գիտցող աղվեսը ջուխտ վտաով թալաք կընկնի. (ՍՎ. 100, 180, Կ. 486):
- Շատ դատես՝ շատ սուտես. (ՍՎ. 270):
- Շատ հեռու յես բարեկենդանից. (ՀԶ. 243):
- Շատ մի սիրիլ՝ ատել կա, շատ մի քատիլ՝ սիրել կա. (ՀԽ. 215):
- Շիտակ խոսքը հանաքով կասեն. (ՍՎ. 260, Բ. 96):
- Շունը կը հաչի, քարվանը կը քոչի. (ՍՎ. 207)

Կ. 149, ՀԽ. 544, Յ. 191):

Շուներ շան միսը չի ուտիլ. (Հն. 106):

Շուներ շանից՝ յերկուսը մի տանից. (Կ. 68, Հն. 106, ՄԱ. 19):

Շտապող թառլանը (բազե) վորս չի անիլ. (Կ. 460)

## Ո

Ոձի գլուխը վոր կը ցավի, կերթա ճամբի մեջ տեղ  
կը վեր կընկնի. (ՀԽ. 47, Հն. 38):

Ոձի սեին ել նայաթ, սպիտակին ել. (ՀԽ. 60):

Ոձի փուշը լակլակը կը մարսի. (ՄՎ. 199):

Ոճադտան քյուլ աքսիկ ոլմադ. (ոճաթիցը մոխիրը  
չի պակսիլ. (Կ. 118):

Ով չուշտ, նա կուշտ. (ՀԽ. 573, 574):

Ով վոր աշխատի՝ նա կուտի. (ՄՎ. 7):

Ուղտը ինչքան սատկի, ելի կաշին մի իշի բեռը  
կըլնի. (ՄՎ. 80, 179, Կ. 161, ՄԽ. 4):

Ունքը շինելու տեղ՝ աչքն ել կը հանի. (Կ. 486,  
ՀԽ. 310):

Ուշ եկավ՝ նուշ եկավ. (Հն. 36):

Ուրբաթը թեզ յեկավ, քանց շաբաթը. (ՄՎ. 204):

Ուրիշի համար փսս (հոր) փորես (փորողը), ինչ  
քըղ մեջը կընկնիս (զլիսի վրա յե տնկվում),  
(Աք. 75, Շն. 224):

Ուրիշի ձեռքով փուշ բռնի. (ՀԽ. 310):

Չալ ոձը տեսնողը չալ չաթվից կը վախի. (ՄՎ.  
71, 168, Կ. 232):

Չեմ ուղու՞մ ջերս քցի. (ՀԽ. 219, Բ. 252):

Չորս վոտով գարու հորն ընկնել. (ՀԽ. 174):

- Պղինձը վեր ընկավ՝ կոտորվեց վոչ (չկոտորվեց),  
 համա ձենք վեր ելավ. (ՍՎ. 252, Յ. 245):
- Պղտոր ջրի մեջ թոռ գցել. (ՀԽ. 241):
- Պատիկ ա ու ճատիկ ա. (Բ. 234, ՀԽ. 306, 312):

Ջ

- Ջուրը ջրամանիցը հանել. (ՍՎ. 44, ՀԽ. 241):
- Ջուրը չը հասած վոտներն ե հանում. (Յ. 240)
- Ջուրն ընկնողն անձրևից չի վախիլ. (Հն. 192,  
 Յ. 245, Կ. 92):
- Ջուրն ընկնողն ամեն մի ձեղիցն ել փրկություն  
 ե սպասում. (Շն. 123):
- Ջուրն իր ճամփեն կը գտնի. (ՍՎ. 324):
- Ջրի ափը չի հասած՝ վոտները հանել. (ՍՎ. 10):
- Ջրի հետ գնալ, դժի (ավաղի) հետ մնալ. (ՍՎ. 317):

Ռ

- Ռահաթի սիրտը լեն կըլնի. (ՀԽ. 266):

Ս

- Սանդն ել ա իրա ձեռին, դաստեն ել (սլոպոքն  
 ել). (ՍՎ. 102, Կ. 44, ՀԽ. 60):
- Սերը սովորը կուտի. (ՍՎ. 199):
- Սերն աթարիցն ա կպել. (Կ. 489):
- Սև փողը սև որին բանացրու, դեղին վոսկով սա-  
 րեր դարձրու. (Բ. 123):
- Սիրտս սուփրա չի՝ ամեն տեղ բանամ. (Կ. 501,  
 511):
- Սովածը հաց կը տեսնի յերադում ծալավը՝ ջուր.

(ՍՎ. 273):

Սուր լեզուն ոձք ծակիցը կը հանի. (ՀԽ. 23):

Սուփրեն զցած՝ բանն անիծած. (Հն. 86):

Սրբի դուռն ել առանց խաչհամբուրի չեն դը-  
նում. (Բ. 269):

## Վ

Վաղի աղվեսի պես՝ դուռնչներս չի հասնում, ա-  
սում ենք՝ թթու ա, ատամներս կտոնի. (ՀԽ. 98):

Վաղի սաղը քոքել (ծանոթ բան ասել). (ՀԽ. 333):

Վայ հախին, վայ նհախին. (ՀԽ. 511):

Վատ համբավը շուտ աւղ կը հասնի. (ՀԽ. 406):

Վողը վեր կալած ջաղացը խարաբ կանի ցորնի  
հացը. (ՍՎ. 66):

Վտոզ կարպետովդ արա (մեկնի). (Հն. 33, Կ. 473):

Վորտեղ բարակի՝ ենտեղ կտրվի. (Ց. 245):

Վորտեղից ե կինդ, այն տեղից ել դու. (Շն. 217):

Վորտեղ հաց, ենտեղ կաց. (ՀԽ. 174):

## Տ

Տանու տերտերին որհնյա տեր չկա. (Կ. 367):

Տանուտերի վկեն գղիրն ա. (ՍՎ. 202):

Տանտրոջ վրա լիս վեր եկավ, ո՞վ տեսավ — գղիրը.  
(ՍՎ. 202, ՀԽ. 236):

## Փ

Փարչ, քեղ ասեմ, կուլա, դու լսիր. (ՍՎ. 291):

Փեշաքյարը (արհեստավոր) փեշաքարին թշնա-  
մի ա. (Ց. 237):

Փեղը վերցնես՝ դող շունը կիմանա. (ՍՎ. 22, Կ. 465)

Փոխը ոխտը աուն ա պահել. (ՀԽ. 205):

- Փողն ու հողը մին ա. (ՍՎ. 4):  
 Փորը վոր կա, անտակ ձոր ա. (Կ. 122):  
 Փորձանքի կես ճամփիցը դառնալը խելոքու-  
 թյուն ա. (ՀԽ. 426):

Ք

- Քաղցած ճաշին են քնում. (ՀԽ. 273):  
 Քաղցր լեզուն ոձը ծակիցը կը հանի (Կ. 134):  
 Քաշալը դեղ գիտենա, իր գլխին կանի. (Կ. 313,  
 Բ. 294):  
 Քարն իր տեղը ծանր կըլնի. (ՍՎ. 77, Շն. 225):  
 Քարը վեր կալած՝ քարի տակին դրած. (ՍՎ. 179):  
 Քարը վերցնենք՝ քարի տակը դնենք (Թագցը-  
 նենք). (Յ. 161):  
 Քենին մհանա արել, յարոջը տես ա եթում.  
 (ՀԽ. 99):  
 Քենին նշանածի բերանն է. (ՀԽ. 220):  
 Քթալ քթալ հավաքում ենք, շերեփի շերեփի դուրս  
 տալիս. (ՀԽ. 468):  
 Քհաճն ու մեռելը մին ա. (ՍՎ. 17):  
 Քո բանն աջ ա, ով կուզի թող հաշա. (ՀԽ. 65):  
 Քո ցերեկվա ման յեկած տեղերը յես գիշերն եմ  
 ման յեկել. (Բ. 253):  
 Քոռն ինչ կուզի—յերկու աչք. (ՀԽ. 201):  
 Քույրն ասում է յեղբայր ունիմ, յեղբայրն  
 ասում է քույր չունիմ. (ՀԽ. 215):

Ժողովրդական ջրոհիջներ

ու

Ավանդոթներ



ԿԱՐԲԵՅՈՒ ՅԵՎ, ՍԱՏԱՆԱՅԻ ՎԵՃԸ

Մի անգամ, վորպէս թէ, մեծ վիճարանություն  
և ծագել կարրեցու և սատանայի մեջ. արևի ծագումն  
և յեղել նրանց հակաճառության շարժառիթը. նրան-  
ցից ամեն մեկը պարծեցել և յուր հեռատեսությամբը.  
պայքար են մտել, դաշն են կապել, մեծ վճարք են  
դրել, թէ ո՞վ իրանցից շուտ կտեսնի արևի ծագումը:

Արշալուսից ելի կանուխ՝ յերկունս ել կանգնել  
են վորոշյալ տեղում. դեպի արևելք և սևեռել յուր  
աչքերը սատանան և սրտատրոփ սպասել և յերկրի  
լուսատուն տեսնելու և դաշը շահելու: Դեպի Ավագ  
Մասիսի յերկնածայր և ալեզարդ կատարն և նայել  
ճարպիկ կարրեցին:

— Հաղթության, ծափ դարկելով ձայն և տվել  
կարրեցին և ցուցամատով պինդ խթել և յուր հակառա-  
կորդի կողքը:

— Ի՞նչ է:

— Չոռն ու ցավը պինդ է, կույր ես ու աստծու  
յերեսից ընկած. ի՞նչ ես դունչդ արևելք ցցած մնացել՝  
դարու հոտին քիթը վեր քաշած իշի պես, աչքդ արև-  
մուտք դարձրու, ահա պսպղում են Մասիս պապի  
արծաթափայլ մազերը, շքս տեսնում, ձյունի վոսկեշաղ  
հատիկներն անգին ալմաստի պես աչք են ծակում,  
հիմի աչքերիդ յեղած լույսն ել կը կտրեն:

— Իրավ, վոր աչքով ել, մտքով ել կույր եմ յեղել:

վոր աշխարհքի ստեղծագործությունից մինչև ես որ հարյուրավոր փորձանք եմ հասցրել այս աշխարհքին ու վոչ մի որ չեմ նկատել, թե Մասիսն և յուր վիթխարի հասակովն արեին առաջին բարեք տվողը, խոստովանում և անկոտորումը:

Բ. 18—19.

ԿԻՍՈՎԻ ԳԱԶԱՐ ՅԵՎ ՅՈՐԵՆ ՑԱՆՈՂ, ԿԱՐԲԵՅԻՆ  
ՈՒ ՍԱՏԱՆԱՆ

Յերբ վոր չար սատանեն իմացավ, վոր կարբեցին արեն իրանից շուտ տեսավ, ինքը սևերես, ամոթով մնաց, միտք արեց՝ մի հնարքով յերեսի կեղտը սրբել, խոսքի տակ չը մնար:

— Յեթե դու այդքան դիտուն ես, ասաց նա կարբեցուն, կը նշանակի մի սլտտիկ սատանա յել դու յես՝ արի յեղբայր դառնանք, աշխատանքի կալչենք, առ ու տուր անենք, թե կուզես՝ վար ու ցանք անենք, դատումը հավասար բաժին անենք:

— Շատ լավ, ասաց կարբեցին ու մեջները համաձայնություն կայացավ:

— Ի՞նչ գործ բռնենք, վորոգուտը շատ լինի, մտածեցին նրանք ու վերցրին, գաղար ցանեցին:

Տարին անձրևային եր, գաղարի թուփը մի գաղ բարձրացավ:

Սատանեն, դորթ և սատանա յե, ճարպիկ ու դալում և, բայց մարդիկ մոլորեցնելուց ու մեղքի մեջ գլորելուց ավելի ուրիշ շնորհքներն աստված նրանից կտրել և նա յուր կյանքումը հողագործություն չեք արել: Բայց ինչ կանես, վոր աչքածակ և միտք

արեց, թե ինչ հնարքներ գործ դնի, վոր կարբեցուն  
խարի, ոգուտից զրկի:

— Արի, ասաց, կարբեցի յեղբայր, ել դու նեղու-  
թյուն մի քաշիլ գաղարը հնձելու, յես ինքս կըհնձեմ,  
յերեսն ինձ՝ արմատը քեզ, յես ինքս կերած չեմ, բայց  
լսել եմ, վոր գաղարի արմատը թփերիցը համեղ ե:

Կարբեցին մտիկ տվեց սատանի աչքերին, յուր  
սուր խելքովը նրան վոտից չափեց, տեսավ, վոր եղ  
անպոզի հենց անուհն ե սատանա, ինքը կատարլալ  
անասունների անասունն ե, յերևում ե, վոր գաղարի  
հոտն ել չի առել, ծիրանի ու դեղին գույնն ել չի տե-  
սել:

— Շատ լավ, ասաց նա սատանին, թող ք՞  
ասածը լինի, քեզ փեշքյաշ, դնա յերեսը հնձի, վեր  
կալ, տակը թող ինձ մնա:

Ուրախ ուրախ հնձեց սատանեն գաղարի տերե-  
ները, գեղացու պատկերի մեջ մտավ, մի մեծ սել լցրեց  
ու տարավ Յերևան ծախելու:

— Գաղար եմ ծախում, գաղար եմ ծախում. քանի  
ուլծ ուներ, սկսեց գոռալ ու մուշտարիք տաքացնել  
սատանեն:

— Հիմար գեղացի, լսողը պատասխանեց, եշն  
ինքդ ես, վոր ուղում ես մեզ իշացնել, հիլ չգիտի, վոր  
գաղարի թփերն եշն ել չի ուտում:

Ղարթ վոր շփոթված ու մոլորված կանգնել եր  
սատանեն շաշի նման, բերանը բաց:

Մեկ ել ինչ տեսնի, յուր հարակաշ կարբեցին  
գաղարի բռն իշին բարձած՝ բերեց մեյդանումը վեր  
դրեց: Բաղմությունը գլխին հավաքվեց, ձեռաց մարդի  
ապրանքը ծախսվեց, փող դառավ:

Առնողը յետ եր դառնում, սատանին անպատ-  
վում, թե՛ անխելքի վորդի անխելք, աչքերդ չորս բաց  
արա, դադարի թփերն իշի նման դու կեր ու արմատը  
բեր մեզ ծախիր. ես մարդիցն որինակ վեր կալ, սա  
յեկ քեզ նման մի գեղացի յե:

Չար սատանեն սրտի հերսիցը սեպազ, կուպը  
դառազ, ինչպես յուր պիղծ հողին սև է, ամո-  
թիցը տեղն ու տեղը անդունդը հալածակվեց. բայց  
ատամները կրճտացրեց կարբեցու վերա, թե՛ յես  
սատանա չըլնեմ, յեթե վրեժը չը հանեմ:

Մյուս գարունք ել յեկազ, կարբեցուն առաջար-  
կեց ընկերանալ: Նա յեկ համաձայնեց:

Եդ տարին հացի թանգություն եր, վճոցին  
ցորեն ցաներ:

— Չե՛, ախպեր, ասաց նրան աշունքը սատանեն,  
հերու գազարումն յես վնաս քաշեցի, խարվեցի, յերե-  
սը յես վերցրի, տակը քեզ տվի, ես տարի մեռել ես,  
կտրվել ես, արմատը յես պետք է վերցնեմ, յերեսը  
քեզ տամ, հնձի, առ զնա, կուզես ինքդ կեր, կուզես  
տավարիդ ուտացրու:

— Համ ինքս կուտեմ, համ տավարիս կուտեցնեմ,  
պատասխան տվեց կարբեցին և մարանդուն դրեց, ցոր-  
նի արտը հողի բերնիցը հնձեց, վեր կալազ, անպետք  
արմատը սատանին բաժին թողեց:

Ես բաների համար է, վոր կարբեցոնց սատա-  
նախարճ են ասում:

Բ. 94 — 97.

Այդը գլխովը հասարակ ջուր չի, նրա ջուրը չի գնում, միշտ կաննած ա, նա անտակ ա, մարդ չի կարող նրա մեջը մտնել: Են սհաթը կուլ կը տան հրեղեն կենդանիքը: Ուրիշ ջրերի միջինը ձկներ ու գորտեր են, համա Այդը գլխով միջին սրանց վոչ մինը չես գտնիլ: հրեղեն ձիանք, սպիտակ հրեղեն գոմեշներ, մարդաձուկն ու շատ ուրիշ դադաններ են լիքը Այդը գլխումը: Եդ հրեղեն ձիանոնց ցեղիցն ա Քյոոողլիի դաթը<sup>1</sup>, վոր թեւովոր և յեղել: Այս բանը, իբր թե, տեսել և խառատ Մուրատը: Նա տասը, տասն և հինգ փայտե ուղտեր շինած՝ իրար քամակից կապած՝ սանձը ձեռին քաշելով՝ կողբից աղ և յեղել բերելուս. հանկարծ զիմացից տեսնում և Քյոոողլիին յուր կտրիճներով և յերկյուղից քանդում վաչք թափում դեռնին յուր ուղտերն և դարձնում մի կույտ փայտ ու ինքը մտնում Այդը գլխով յեղեգների մեջը:

Քյոոողլին՝ վոր նկատած և լինում ուղտերի շարքն և հիմա դանում և փայտացած — շատ դարմանում և այս հնարադեա վարպետի վերա. ուր վոր լինի, հրամայում և յուր քաջերին, պտտակ այն մարդուն և յուր առաջին կանգնացնել: Խուզարկուները քաջ զիտելով, վոր մարդը թաղկացած կը լինի յեղեգնուտների մեջ, իջնում են այնտեղ, ձիանքն արտաի թողնում և սկսում վորոնել: Ամբողջ որը յերբ վոր Քյոոողլին դուր ժամանակ և կորցնում, վարպետը մի ասել և դառնում ու կորչում, հրամայում և ձայն տալ, թե

1) Առաթն եր այն առասպելական նժույգ ձին, վորով Քյոոողլին քաջության անուն և տարել: Ծանոթ. հեղինակի:

ինքը յերդմում և յուր սրովը, վոր յեթե փայտն ուղ-  
տերի տերը դուրս դա ինքնահոծար, նա նրան վոչ  
միայն չի պատժիլ, այլ և կը վարձատրի. ապա թե  
վոչ, յերեք շաբաթ շրջապատած Այդր գյուլը՝ քաղցած  
պիտի սպանի իրան:

Յեւ անա դուրս և գալիս Մուրադը դողդողալով  
և գլուխ տալիս Քյոոողլվին:

— Հրամայիք, գլխիդ դուրբան:

— Ընչի՞ թագ կացար:

— Քո անունից աշխարհքն և սարսափում, և ու-  
ղիդն ասեմ, հիմա ել չեյի դուրս դալ, յեթե քեզ ավե-  
տիք տալու առիթը չունենայի: Մուրադը պատմում և  
Քյոոողլվին, վոր ինքն ահանատես եր, յերբ նրա մա-  
տակ ձին արածում եր լճի ափումը, մի հրեղեն սպի-  
տակ այդր ձի դուրս յեկավ ջրի միջից, թուով նրա  
մատակի վերա ու կրկին ջրի տակը մտավ:

— Ուրեմն դու ազատ ես, սարքիլը քո ուղտերդ,  
բարձիր բեռներդ և ճանապարհ ընկիր:

Մուրադն ստացավ Քյոոողլվի ընծայն, կարգի  
բերեց յուր ձեռագործը, բարձեց աղն և գնաց:

Քյոոողլվի հրամանով ի պատիվ այն այդր ձիու,  
վորը տասն և մեկ ամսից հետո պարգևեց իրան նրա  
սիրեկան դասթին՝ այդ լիճն այն որվանից կոչվում և  
Այդր գյուլ:

Հե. 28—29.

ԱՐԱԳԱԾԻ ԿԱՏԱՐԻ ԼՃԻ ՅԵՎ ԱՅՂՐ ԳՅՈՒԼԻ ՋՐԵՐԻ  
ՄԵՋ ՅԵՂԱԾ ԿԱՊԸ

Ասում են, վոր Այդր գյուլի ջուրը գալիս ա Արա-  
գած սարի կատարումն յեղած լճից. եղ բանն իմա-

ցել և մի հովիվ: Նա այծի քամակից ձգում և յուր  
 գավազանը, վոր ընկնում և Արագածի լճի մեջը: Մին-  
 չև մոտ և գալիս հովիվը, տեսնում և, վոր յուր գավա-  
 զանը ջրի յերեսին չի: Այս յերևույթը նրան կարծիքի  
 տակ և ձգում, մանավանդ յերբ նա Արագածի ստորոտ-  
 ներումը վոչխարներն արածացնելուս, գլուխը գետ-  
 նին և դնում մի փոքր հանգստանալու, միշտ ջրի  
 քնքնոց և լսում: Մի շարաթից հետո դիպվածով նույն  
 հովիվն յուր վոչխարները գաշան իջեցնելուս, Այդր  
 գյուլի մեջ տեսել և յուր փայտը: Հովիվի կասկածն ավե-  
 լի սաստկանում և, նա մտածում և, վոր Արագածի  
 դիտի լճի և Այդր գյուլի մեջ հարաբերություն կա,  
 անպատճառ ջուրը Արագածից գետնի տակովը հոսում  
 և ներքև և դոյացնում և Այդր գյուլը. դրա համար հո-  
 վիվը մի ջվալ դարման շալակում և, բարձրանում  
 Արագածի կատարը և լճի մեջ լցնում. յերկու որից  
 յուր դարմանի հետքը Այդր գյուլումն և գտնում:

ԼԽ. 28—29.

### ՔԱՐՎԱՆՂՌԱՆ ԱՍՏՂԸ

Քարվանը գաշտումն և յեղած լինում, ամպը պատած  
 գիշեր և լինում, հանկարծ յերկինքը պարզում և,  
 քարվան-բաշին կարծում և, թե իուս-աստղն և, քարվանն  
 ըշտապացնում և, վեր և կացնում ու ճանապարհ ընկ-  
 նում:

Շատ ան ու դարհուրելի տեղով պետք և անց-  
 կենային, դնում են, դնում, լույսը չի բացվում. մեկ  
 ել մի խոր ձորի մեջ գողերը դրանց հառաջը կարում

են ու բոլորին բրդում, վեր ածում: Աստղը սխալա-  
ցրեց, քարվանքը կոտորել տվեց, անունը մնաց Բար-  
վան — դուան:

Բ. 48.

---

### ՀԱՐԹԱԳՈՂԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Մի դիշեր բլբլան Բելը գնացել եր մեր Հայկ  
պապի մարագիցը մի թոռ լիքը դարման գողացել, շա-  
լակն առել ու փախչում: Ջանս քեզ մատաղ, Հայկ  
պապի, շներին քիս եր տվել քամակիցը. ինքն ել մի  
բարձր կոնդի գլխի կանգնել եր ու մտիկ տալիս:  
Բելը դարմանը շաղ տալով փախչում եր: Մեր խելոք  
պապը հենց վոր տեսավ, թե շները չը կարացին հասնել  
գող Բելը դիմացի սարի քամակն և ուղում անցկենալ,  
ու ազատվել, են սհաթը դաղ ու կիսանոց, կուանս պես  
հաստ նետը դեմ քցեց աղեղի լարին, աչքեց ու լարը  
ձգեց: Նետը սըլ...լ...լ... գնաց, եդ գող ու ավաղակին  
ծակեց ու վզդալով անց կացավ հինգ որեն ճամփա,  
հեռու, վեր ընկավ:

Դարմանի թոռը Բելի մեջքիցը գլորվեց, պատուվեց,  
մնացողն ել ենտեղ շաղ անցավ, յերկնքի յերեսը բըռ-  
նեց:


Ինքն ել գլխի վերա կունդիկ-կունդիկ անելով,  
սարի ձերիցը գլորվեց ձորը:

Բ. 50—51.

ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ՅԵՎ,

ԱՇՈՒՂԱԿԱՆ ՅԵՐԳԵՐԻՆ



ՄԻ ԴԱՐԳ ՈՒՆԻՄ . . .

Մի դարդ ունիմ, դարման կուզեմ,  
Դարմանս ջիւտան ջան կուզեմ.  
Ամեն շնորհք ձեռիցք գա,  
Ինքն ել հուրի զլման կուզեմ:

Սիրով մոտս գալ ունենա,  
Հաքի շորն ալ ունենա.  
Սարոբ տալով, սիրուն դեմքով  
Կաքավների նման կուզեմ:

Իմ սիրածն ել ինձ ա սիրում,  
Սիրո բոցը սիրտն ա երում.  
Եսպես ուխտի պինդ մնալը,  
Մինչև որն մահվան կուզեմ:

Գարնան վարդ ա՛ր բյուրբյուլ ունի,  
Ինձ դռանը միշտ դուլ ունի.  
Վարդ բյուրբյուլի սուրբ խորհրդին  
Յես մի բարի վախճան կուզեմ:

Վարդիս ծառը շատ փշոտ ե,  
Ձեռ մեկնելուս կը ծակոտե.  
Ճամփին ածած տատաշի տեղ,  
Փափուկ չայիր չիման կուզեմ:

Թեկուզ արնի մեջը կորչի՞,  
Սուր փշերից բուրբ ուռչիմ,  
Ելի ճամփիցս յետ չեմ դառնայ,  
Վարդիս համար տալ ջան կուզեմ:

Չի ասեք, թե Սոս, քանի՞ լաս,  
Վարդ կանչելով միշտ մղկտաս.  
Սաղ վարդը ձեզ՝ մի թերն ել ինձ,  
Աստված անի արժան կուզեմ:

Սվ. 231.

ՔՈՒՉՈՒՄԸ ԽԱՆ ԵՍ ԳԱԼԻ . . .

Քուչումը ման ես դալի,  
Տեսնողին եշխ ես տալի,  
Սիրտդ սրտիս կալցնելով,  
Աչք ու ունքով կամ ես տալի:

Թուխ աչքերիդ ադամանդը  
Կտրել ե սրտիս բանդը,  
Թերթեկունքդ իբար տալիս,  
Իմ կամացը տեղ ես տալի:

Դուռը կանգնած նայում ես միշտ,  
Ուրախ սրտիս ըլնում ես վիշտ,  
Մի քիչ տխրած ժամանակդ ել  
Յերեխայի պես եմ լալի:

Վախտ նազ կանես, հեչ չես դուս դալ,  
Զահել ջանիս խնդում չես տալ,

Վախտ երկուսով, պողրուչկիով,  
Խունջիկ կը դաս, իմ նազելի:

Ի՞նչ ելալ քեզ ես շարթումս,  
Վոր կտրեցիր անուշ քունս,  
Խեղճ քո Սասի սրտին եղբան  
Ինչի՞ սիրովդ սոր ես տալիս:

ՍՀ. 181 —182.

ՍԻՐԵԼԻ ԶԱՆ . . .

Սիրելի ջան, հեռացար,  
Չլլինի՞ ինձ մոռացար.  
Սրտումս վառ ա քու սերը,  
Երում ա ջիգյարիս ծերը:

Դու մի հատ ես աննման,  
Աշխարհումս դովական.  
Փոթոթում ես տեսնողին,  
Կրակում նրա հոգին:

Չենդ ա հրեշտակի,  
Չըկա յերկնքի տակին.  
Լսողի խելքը կերթա,  
Ել չի կարող հեռանա:

Շատերը դիտեմ յես,  
Վոչ մինը չաժեն քեզ.  
Գիշեր ցերեկ յերազով,  
Քեզ դրկում եմ հավեսով:

Չալատաս խոսքին շատերի,  
Ինձ մուղարար միտդ պահի,  
Սոսը քեզանից սավահի,  
Եւ չի սիրիլ ուրիշի:

Սվ. 155—156.

### Ն Ա Ն Ի Կ

Նանիկ արն, մեծանաս,  
Հալիվորիս, ծերանաս.  
Յերբ վոր խելքիդ տեր ըլնիս,  
Պառավ տատիդ չմոռանաս:

Տատը գլխովդ պտիտ դա,  
Ինչ խաթա ունիս՝ տատին դա.  
Յերեսիս մի բուռ հող քցես,  
Իմ տեր ու տիրական բալա:

Սվ. 138.

### Ը Ն Չ Ա Ն Ք Յ Ե Ր Բ . . .

— Ընչանք յերբ յես դիմանամ, մաշեցիր ջանս, վարդիթեր,  
կտրեցիր կյանքիս թելը, դու իմ հողահանս, վարդիթեր,  
Լերդ կրակ ա դառել, երում ա ջանս, վարդիթեր,  
Հերիք ա ինձ չարչարես, կտրի տանջանքս, վարդիթեր:  
Թո՛ւ խթուխ մաղերիդ հյուսը, աղեղնաձև ունքերիդ  
հետ,  
Հրեշտակի ճակատդ՝ վոսկի փինջան աչքերիդ հետ,  
Դրախտի դուռ բերանդ, սիպտակ շարմաղ պոռչներիդ հետ,  
Գրավել են իմ սիրտս՝ մորթել կենդանս, վարդիթեր:

Յարար կըլնի՞, վոր բռնեմ լիսաթաթախ ձեռներդ,  
Շլնքովս պտիտ տամ յերկար բարակ կոներդ,  
Պաչեմ ճակտիս դնեմ, ակնամուճի մատներդ,  
Ասեմ թե ել դարդ չունիմ, իլ հողեհաս, Վարդիթեր:

Եղուց ժամ պտի դնաս, դնացած ժամիդ մատադ,  
Ճամփեդ պիտի սպասեմ, կես գիշերիցն ել շատ վաղ.  
Դուռը կտրած կըկաննեմ, վոր քու սուրբ յերեսի շաղ  
Արևի հետ ինձ դիպչի, կաշոդի բանս, Վարդիթեր:

Մանիշակի եմ ման գալի, քեզ ընծա տալու բերեմ,  
Վոր ամենքը իմանան, թե յես իմ խոսքին տեր եմ,  
Մարտ ամիսն ա, հեշտ բան չի, ո՞վ կասի ձինը քերեմ,  
Մատներս թիակ շինելով, անեմ ես բանս, Վարդիթեր:

Հայաստանումը մի հատ ես, վոչով չունի քեզ պես յար,  
Քեզ տեսնող ազապ տղեն դլուխը կտա քարեքար,  
Կուղի սերդ իրան քաշիլ, մեռնիլ հետդ բարեբար,  
Համա դամիս ձեռիցը կփովի կոանս, Վարդիթեր:

Սոսի դարդը քանի կա՞ խոսքիցը յետ չի դառնալ,  
Գիշեր ցերեկ անհանգիստ, գլխին տալ պտի ու լալ.  
Յերբ քեզ կառնեմ կպրծնեմ, հաց կուտեմ կուշտ ու  
հալալ,  
Բան ու գործ կթողամ, կնստեմ տանս, Վարդիթեր:

Սվ. 6--7.

ԻՆՁ ԵՐՈՒՄ Ա. ԵՆ ՍԵՐԸ . . .

Ինձ երում ա են սերը, վոր դիշեր ցերեկ վառ ա,  
 Լերդ ու թոքս խաշում ա, վնյ, յես սարարի դառա.  
 Աստված սիրողք, ջուր ածեք, ես սերն ելավ իմ մահը,  
 Սիրեկանիս անունը ինձ արեց փարա փարա:

Մեռնիմ են աչք ու ունքին, վոր ծիածան ա ու արև,  
 Մեռնիմ են անուշ լեզվին, վոր տեսնելիս տա բարև,  
 Մեռնիմ խուճուճ մաղերին՝ ընչանք ծունկը կախ ընկած,  
 Ով վոր տեսնի՝ դարմանա, նրա սիրտը լեռ քար ա:

Թշերի ձերը վարդ ա, պոսշները շարմաղ են,  
 Սադաֆի պես առամները մարդի հոգին կը քաղեն,  
 Պատիկ կարգին բերանը, կաքավակաուց չանեն,  
 Փափուկ մախմուր բոխաթը, դույ բարձի հավասար ա:

Շիշակ տնկու հասակով, սիրամարդի տեսքովը,  
 Բամպակի պես կոներով, նաղաճեմ գնացքովը  
 Սիրտս քաշեց իրան մոտ, խելքս առավ գլխիցս,  
 սեց մին որ կստանաս նեղութունիդ փոխարա:

Քսան յերկու տարումն եմ, քսանը շուտ անց կացավ,  
 Ես յերկուսը հենց գիտեմ, յերկու հարրից ավելցավ.  
 Սև մաղերիս մի խարվեք, սև սրտիս մտիկ արեք,  
 Սոսի դարդն ես դու, աղջիկ, ինձ մի դեղ ու ճար արա:

Սվ. 162.

ԱՐԻ՛, ԱՐԻ՛ ԿԱԶԱԳԱԿ...

Արի, արի, կաշաղակ, բարով յեկար ինձ համար,  
 Վարդիթերենց տանիցը բեր նոր խաբար ինձ համար.  
 Քեզ համար միս կրերեմ, կեր կշտացիր, ման արի.  
 Վարդիթերիս ասա թե, դու տես մի ճար ինձ համար:

Ասա թե քու խեղճ Սոսը, ձեռը ծոցին ման գալով  
 Գաշտեր, չուեր չափում ա, սիրույդ համար ջան տալով.  
 Մեռնիմ ազիզ արևիդ, քանի ձենդ լսել եմ,  
 Քաղցր լեզուդ դառել ա մի սուր նշտար ինձ համար.

Են գիշերը ինձ համար, դու նոր արև ծագեցիր,  
 Վոսկենիայլ ճառագայթդ սրտիս մեջը թափեցիր.  
 Վերջացավ իմ կարծիքս, սիրույդ կապը սնդագավ,  
 Թող մահը դա որես յետ աղատարար ինձ համար:

Հալաղարից կարմիր ես՝ մախամուր ծաղկի խավ ունիս,  
 Անմահական ջրի պես մի դուես գալու թավ ունիս.  
 Քու թավը յես լավ տարա, սրտիդ սիրեկան դառա,  
 Քեզ մոտ դուզ ա ըստուց յե ա՛ թե ձոր թե սար ինձ  
 համար:

Դե թոի քնա, կաշաղակ, Վարդիթերենց կտուրը,  
 Սիրեկանիս իմաց տուր ես սիրտ կրակոդ լուրը,  
 Պատմիր թե Սոսն ասում եր, են եր իմ բախտի որը,  
 Վոր քու կարմիր թշերդ ելան շաքար ինձ համար:  
 ՍՎ. 53—54.

Ս ո ս ր

Բան եմ ասում, ահանջ դիր, անկաջիդ մատաղ, Վարդիթեր,  
 Ինձ մի քցիլ չուերը, կրակիլ սաղ-սաղ, Վարդիթեր,  
 Հանգիստ ու դադար չունիմ դառել եմ սարսաղ Վարդիթեր  
 Աստված սիրես խնայի, թող մնամ խաղաղ Վարդիթեր:

Գարեգինը

Հրամայի, վոր լսեմ, դու ինձ համար վարդ, Սոսի ջան,  
 Պատրաստ եմ յես կատարել ամեն հրամանդ, Սոսի ջան,  
 Թեկուղ սաղ աշխարհքն ինձ ասի վատարաղդ, Սոսի ջան,  
 Չեմ թողալ քու սրտումդ մի կորկի չափ դաղ, Սոսի ջան:

Ս ո ս ր

Աղջի, յերբ վոր քեզ տեսա, թռավ յերեսիս գույնը,  
 Թե արհդ կսիրես, մի կտրիլ իմ անուշ քունը.  
 Տված խոսքդ պինդ պահիր, վոր հաստատվի սրտիս  
 սյունը,  
 Սերիդ կապը նորոգի, իմ վոսկի վարաղ Վարդիթեր:

Գարեգինը

Ինձ պես հասարակ աղջիկը, վոր հող եմ քո վոտի տակին,  
 Ի՞նչպես կարամ քունդ կտրիլ, վոր դերի յեմ քու պատ-  
 կերքին.

Իր խոսքիցը յես դառնողն արժանի ա թեժ կրակին,  
 Սերիդ կրակը նոր ա ու նոր, երված սրտիս շաղ Սոսի ջան:

Ս ո ս ր

Ուղու՛մ եմ քեզ մեկ դովիլ, վախու՛մ եմ, եդ իմ բանը չի,  
Թե արեգակ կասեմ, կասեն նրա նմանը չի.

Արեգակը աչք ծակող ե, եդ սրա նշանը չի,  
Բաս լուսնակ ես կես ամսվա, իմ լիս ու շավաղ  
Վաղիթեր:

Գ ա Ր Ե Գ Ի Ն Ր

Գովասանքը դարդակ բան ե, սերն ամենիցն ե գովելի,  
Արեգակ, լուսնիակ ասելով՝ վռչինչ ողուտ չի դուս գալի.  
Թե գովելու ջանն ես ուղու՛մ, քեզ պես ել մեր մինը կըլի  
Համ քաղցրաձայն, համ պարզասիրտ, համ կտրիչ  
դռչաղ, Սոսի ջան:

Ս ո ս ր

Լուսնիակն ել կըխավարի, դու միշտ պայծառ ես հողի ջան  
Յաղուտ, ալմաստն ել կը փչվին, քյար չի անիլ քեզ վո-  
չինչ բան.

Վարդն ել կթոռոմի, ամեն ծաղիկ կըսալարին,  
Բայց իմ սրտին անթառամ ես, իմ բաղչա ու բաղ  
Վարդիթեր:

Գ ա Ր Ե Գ Ի Ն Ր

Աշխարհիս ամեն բանը մին որ մի վախճան կուհենա,  
Մին լավություն, մին հալալ սերն ե, վոր հավիտյան  
կըմնա,

Յես ել շուտով կը վերջանամ, թե մուրաղս կիսատ մնա,  
Մուրաղս կիսատ թողողը շուտ մտնի դադաղ, Սոսի ջան:

## Ս ո ս ր

Սոսն եմ, սիրովդ տողորված, սաղ քշերը անքուն  
եմ մնում,

Վայրենու պես տուն չեմ տեսնում, հեր ու քարափ  
ինձ բան շինում:

Ով յերկուսիս վայիս դառնա, հախ ասանից եմ խնդրում,  
Մուրազաչոր սրտով մեռնի, աճեն ասա, ան Վարդիթեր:

## Գ ար ե գ ի ն ր

Սիրույդ տեղակ սեր եմ տվել, ել ինձանում հալ  
չի մնաց,

Դու վայրենի՛ յես ճլերքի տեր, մեզ ուրախանալ չի  
մնաց:

Ջան ջանի տալուց սավահի՛ վոչինչ բան հուսալ չի  
մնաց,

Վարդիթերի հույսն և աստված, մեկից չունի վախ,  
Սոսի ջան:

Սվ. 130 – 131.

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն



## Ա

Աբասի — 20 կոպեկանոց

Ալմ — ալ

Ալվալա — ալ, կաս կարմիր

Ախարախա (կանգնել) — հալարտ կեցվածքով

Ախպեր — յեղբայր

Ակնամոմ — ընտիր տեսակի մոմ

Աղլուխ — թաշկինակ

Այդր — չամորձատված վորձ ձի

Անարխա — անողնական

Աշկարա — ակնհայտ

Աչքածակ — աղահ, անկուշտ

Աչքել — նայել, դիտել

Աջու — աջակողմյան, աջ

Արին — արյուն

Արոտի թողնել — արածացնել

## Բ

Բալա — պատիժ, դժբախտու թյուն. մանկիկ

Բաղմանչի — այդեպան

Բաշ — դմբեթածե կտուր

Բարեմբարանալ — հավասարվել, հավասարակշռվել

Բհամ գալ — լերեան գալ, առաջանալ

Բոշա — գնչու

## Գ

Գել — գայլ

Գիր անել — գյուլթել, կախարդել

Գլխով պտիտ գալ — փայփայնել, սիրել

Գյահկիր—հետամնաց  
Գյորա—համեմատ  
Գյուլբահու—ծաղկեփունջ  
Գ

Դադ—խարան  
Դադած—խարանած  
Դաստա—փունջ, կույտ, խումբ  
Դատել—աշխատել, բանել  
Դատում—վաստակ, արդյունք  
Դարման—հարդ  
Դղվել—ուղղվել, հարմարվել, հարթվել  
Դին—կողմ  
Դռչ—կուրծք  
Դուշման—ախոյան, թշնամի

Ձ

Ձալում—չար, կատաղի  
Ձիզի—տան ավագ հարսը (ազի)

Ե

Եշխ—յեռանդ, տրամադրու թյուն  
Երծաթ—արծաթ

Ը

Ըննել—լինել  
Ընչանք—մինչև

Թ

Թադ կենալ—թաղնվել  
Թադա—նոր  
Թաղի—վորսկան շուն, բարակ  
Թալաք—թակարդ  
Թառլան—բաղև  
Թավադա անել—հրամցնել, պատվել

Թալ — ծառի կանաչ տերև

Թեր — թերթ. վարդի թեր

Թի — թիակ

Թիքա — սլառառ, կտոր

Թոռ — ցանց, վորոզայթ. հարդի քթոց. աման

Թուճան — 10 ուրլի

Ժ

Ժուռ — չհասած խաղող. թակ միրգ

Ի

Իշտահ — ախորժակ

Լ

Լալաղար — կակաչ. կարմիր, գեղեցիկ ծաղիկ

Լակլակ — արագիլ

Լիս — լույս

Խ

Խարար — լուր, տեղեկություն

Խաթա — փորձանք, սլառահար

Խաթր — սլառիվ, հարդանք

Խառա — ծիրանադույն

Խառատ — հյուսն

Խալ — կտորի (թավիշ և այլն) յերեսի նուրբ շերտը

Խարաք — անպետք, փչացած

Խեր — ոգուտ

Խի — ինչու

Խյուր — հյուր

Խոթել — լափել

Կ

Կամ դալ — համաձայնել, խոսք տալ

Կաննել — կանգնել

Կունդիկ-կունդիկ — թավալիւոր

Կուն — թև. կողմ

Կոնել — ձեռքով հենվել, թիկն տալ

Հ

Հադաթ — սպանելիք

Հալիվորել — ծերանալ

Հախ — իրավունք, վարձք

Հավես — տրամադրություն

Հարակաշ — տոկուն, դիմացկուն

Հեր — քարայր

Հերու — անցած տարի

Հիլ անել — հմայել, դյուլթել

Հորսի — փայտե գործիք, վորով քամուն են  
տալիս դարմանը

Հունար — շնորք, հնարհք. ընդունակություն

Ձ

Ձախու — ձախ, ձախակողմյան

Ղ

Ղաղ — սագ

Ղադար — փորձանք

Ղաթար — շարք

Ղալամ — դրիչ

Ղալամքաշ — դրչով դժված, նկարված

Ղանդ — գլուխ շաքար

Ղաման — նման, պես

Ղոնաղ — հյուր

Ղոչ — խոյ

Ղոչաղ — քաջ, արի

Ղորթ — ճշմարիտ. իրական

Ղուլ — ծառա, սարսուկ-հլու  
Ղուժ — ավազ  
Ղույ — աղվամազ, չար բոթ, գույժ  
Ղուրբան — մատաղ  
Ղրաղ — ախ, յեղր  
Ղամաթ — ակնկալություն, բախտ  
Ղրկել — ուղարկել, հղել

Ղ

ձար — հնարավորություն, կարողություն, ոգ-  
նություն  
ձերք — հիվանդություն, բարակացավ

Մ

Մալ — ունեցվածք, հարստություն, կայք, գույք  
Մախմուր — թափիչ  
Մահնիք — թաղում, մահվան ծիսակատարություն  
Մատակ — եգ գոմեշ  
Մարալ — յեղնիկ (վորձ)  
Մարանդի — մանգաղ  
Մեյդան — հրապարակ  
Մեր մտնել — մայր մտնել  
Մինթանա — շրջագրեատ (հնաձև)  
Մհանա — պատրվակ  
Մով — կապույտ  
Մուղարար — միալար, շարունակ

Յ

Յախա — ռձիք  
Յաղութ — հակինթ  
Յար — սիլած  
Յարար — արդյոք

## Ն

- Նալ — պայտ  
 Նալլաթ — անեծք  
 Նախշլու — նախշած, ծաղկուն  
 Նանիկ — որոր  
 Նարդիվան — սանդուխք  
 Նի ըլնել — բարձրանալ, վեր յելնել  
 Նհախ — անտեղի

## Շ

- Շահի — հինգ կոպեկանոց  
 Շաշ — հիմար  
 Շավաղի — արշալույս, լուսաբաց  
 Շարմաղ — գեղատեսիլ, ցորենի մաղի տեսակ  
 Շիլա շապիկ — կտավե կարմիր շապիկ  
 Շիշաք — ծաղիկ  
 Շհանց տալ — ցույց տալ  
 Շուշա — ապակի

## Չ

- Չալ — խատուտիկ  
 Չախմախի — կայծաքար  
 Չայիր — չիման — մարդաղետին. արոտատեղի  
 Չանա — ընչացք  
 Չավ լինել — հոչակվել, տարածվել  
 Չարդախ անել — տարածել, ցցել (պոզերը, վոտները)  
 Չոլ — անմարդաբնակ դաշտ, հարթավայր  
 Չոլմաղ — անշնորհք, անպետք, անինչք  
 Չոռ — ցավ — հիվանդութուն  
 Չուխա — տղամարդու հնածև հաղուստ  
 Չվան — թոկ, պարան

Պատ - ծոմ  
 Պոպոք -- ընկույզ  
 Պուտուտուրիկ - խատուտիկ  
 Պոռ - շրթունք

Ջան - մարմին  
 Ջանմա - տուգանք  
 Ջեր - դրպան  
 Ջիդյար - թոք  
 Ջիվան - ջահել, յերիտասարդ  
 Ջուխտ - դույզ  
 Ջուղար - պատասխան. լուր  
 Ջվալ - մեծ տոպրակ

Ռադի - համաձայն  
 Ռահաթ - ժողովուրդ, հասարակություն. հալատակ

Սադ - կենդանի  
 Սավահի - բացի  
 Սարսադ - հիմար  
 Սարարի ընկել - լսելակոչույս լինել, ցնդել  
 Սել - սայլ. հեղեղ  
 Սհարդանա - գավառական, դյուղական պաշտոն-  
 յաների առանձնասենյակը  
 Սհաթ - ժամ. ժամացույց  
 Սղալել - կռկել  
 Սորոր տալ - քայլել սահելով

## Վ

Վաղի—վաղուցվա, հին  
 Վայիս—վոսոխ  
 Վելել—վայելել  
 Վեր հատել—ծեծել, գլխին տալ

## Տ

Տանց—դրանց  
 Տատաշ—տատասկ

## Փ

Փախս առնել—փախչել, խույս տալ  
 Փարա—փարա—կտոր—կտոր  
 Փարվաղ անել—շորորալ. սավառնել  
 Փեշաքյար—արհեստավոր  
 Փեշքաշ—նվեր, ընծա  
 Փոթոթել—այրել, խանձել  
 Փոլատ—սողալատ  
 Փոխ հաց—նահապետական դյուղում դրացիներէ  
 մեջ յեղած հաց փոխ տալու սովորություն  
 Փշվել—ի չիք գառնալ, փշանալ, վոչնչանալ.  
 ուռչել

## Ք

Քամակ—գավակ, կոնակ, թիկունք  
 Քամար—գոտի  
 Քաչալ—ճաղատ  
 Քարգահ անել—քստանկյունի դազգյահի վրա  
 ձեռագործ անել, գործել  
 Քաքուլ—մազերի ֆունջ ճակատի վրա  
 Քթել—զղալ  
 Քոմմա—բոլոր, վողջ

ՀԱՄԱՌՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ




- Աք—Աքցիզի (պատկեր), Թիֆլիս, 1896 թ.  
 Բ—Բղդե, Թիֆլիս, 1890 թ.  
 ԿԾ—Կովածաղիկ (2-րդ տպագրութուն), Տիֆլիս,  
 1897 թ.  
 ՀԽ—Հացի խնդիր (2-րդ տպագրութուն),  
 Տիֆլիս, 1904 թ.  
 ՀՆ—Հունո, Թիֆլիս, 1900 թ.  
 ՀԶ—Հուշիկներ, Ա. շրջան, Թիֆլիս, 1894 թ.  
 ՄԽ—Մեր Խեչոն (գրույց), Թիֆլիս, 1899 թ.  
 ՄԱ.—Միքել Աղենց Արդյուլը (իրական կյանքից)  
 Թիֆլիս, 1896 թ.  
 Ն—Նա (պատկեր), Թիֆլիս, 1896 թ.  
 ՇՆ—Շահեն, Թիֆլիս, 1883 թ.  
 ՍՀ—Սոխակ Հայաստանի, Ա. Գրիգորյանց, հատ.  
 3-րդ, Բագու, 1876 թ.  
 ՍՎ.—Սոս և Վարդիթեր (2-րդ տպագրութուն),  
 Թիֆլիս, 1887 թ.  
 Ց—Ցեցեր, Թիֆլիս, 1889 թ.

## ԲԱԺԻՆՆԵՐԻ ՑԱՆԿ

	ԵԶ
1. ԱՌԱՋԱԲԱՆ . . . . .	3
2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ . . . . .	5
3. ԲՅԱԳՂԵՐ	
ա. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՅԵՐԳԵՐ . . .	31
բ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐ	
ՅԵՎ ԱՍԱՅՎԱԾՔՆԵՐ . . . . .	41
գ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶՐՈՒՑՆԵՐ	
ՅԵՎ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ . .	59
դ. ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՅԵՎ	
ԱՇՈՒՂԱԿԱՆ ՅԵՐԳԵՐԻ . . . . .	69
4. ԲԱՌԱՐԱՆ . . . . .	81
5. ՀԱՄԱՌՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . . . .	91







ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0047013

ԳԻՆԸ 1 Ռ. 50 Կ.

*300*

A	I
935.0	

*Յիշմուշ*  
*- 30*

ПРОШЬЯН  
И  
НАРОДНОЕ  
ТВОРЧЕСТВО

Изд. Института Истории и Литературы  
Армянской ССР.  
Ереван—1938 г.